№ 101 Կիրակի, 13 Մայիսի

1912
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾԵՐՈՒՆԻ

Կիրակի, 13 Մայիսի № 101

Տարեկան գինը 10 բուբլի, կէս տարվանը և 7 ամսվանը 6 բուբլի։
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը։

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տէլէֆօն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամենկեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ։

Տպարանի տէլէֆօն № 67.

Վշտահար ՄԿՐՏԻՉ ՍՏԵՓԱՆԵԱՆ ՄԻՐՔԱՅԷԼԵԱՆԸ յայտնում է իր ազգականներին և ծանօթներին, որ այսօր, կիրակի, մայիսի 13-ին, իր հանգուցեալ ամուսնի՝

ՎԱՐՍԵՆԻԿ ՍԱՐԳՍԵԱՆ
ՄԻՐՔԱՅԷԼԵԱՆԻ

մահվան ինն երորդ օրը լինելու է Նորաշէնի եկեղեցում պատարագ և հոգեհանդիսաւ։ Պատարագի սկիզբն է ժամը 10½-ին։

1—1

ԹԻՖԼԻՍԻ ԳՐԱՍԵՆԵԱԿ ԹՑԱՆԻ ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱՅԻ ԱԿՑ. ԸՆԿ.
ՎԻԿԱՆԴԷՐ ԵՒ ԼԱՐՍՕՆ
Գօլովինսկի պր. № 9. Տէլէֆօն № 490.
ԼԻԲԱՎԵԱՆ ԼԻՆՕԼԷՈՒՄ—
ԱՄԵՆԱԼԱՒ ԾԱԾԿՈՑ ՑԱՏԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ։
ԿԼԷՕՆԿԱ սեղանների համար
ԹՑԱՆՆԵՐ
ԿԱՊՄԻՒԼՆԵՐ

(Կ.) առ. 340. 4—1

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՍԱԼՕՆ
Ուրբաթ, մայիսի 18-ին, հանդէսաւոր jour-fixe-ը նուիրված է
ՅՕՌԵԼԵԱՆ „ՄՇԱԿԻՆ"
Երաժշտական բաժինը մեր ընտիր արտիստների մասնակցութեամբ։ Մուտքը անուանական հրաւիրատոմսերով, սահմանափակ թիւով. կողմնակի մարդկանց համար մուտքը 2 ր., ԳՐԱՍԱՆԱՄԵԱԿ «ՄՇԱԿԻ» ալմանախի բաժանորդների համար 1 ր., որ պէտք է տոմսը մինչև հինգշաբթի ձեռք բերել։ (չ.հ.ո.) 26. 4—1

Садъ „Лѣтній Театръ" (Михайловскій просп., 65, д. д-ра Карапетяна).
ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՒՀԵԱՑ «ՄԵՂՈՒ» ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԱՆ ՕԳՏԻՆ
Վաղը, մայիսի 14-ին տեղի կունենայ
ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՁԲՕՍԱՆՔ
Շքեղ ծրագրով և մանկական առանձին բաժնով։ Մանկական ներկայացում և բալէտ, եւրոպական և ասիական երաժշտութիւն։ Մուտքը մեծերի համար 30 կ., փոքրերին 20 կ., Սկիզբը ցերեկվայ ճիշդ ժամը 3-ին։
Մայիսի 9-ի համար վերցրած տոմսակները պահպանում են իրանց ոյժը մայիսի 14-ի զբօսանքին։ 342 1—1

Թիֆլիսի Վաճառականների Աւագ Ար. Ն. ՄԻԼԵԱՆԸ
խնդրում է Թիֆլիսի պ. պ. վաճառականներին, որոնք վերցրած ունեն դասային վկայականներ, բարեհաճեն շնորհ բերել այսօր, կիրակի, մայիսի 13-ին, առաւ. ժամը 11-ին
ՎԱՃԱՌԱԿ. ԸՆԿ. ԵՐԿՐՈՐԴ ԱՐՏԱԿԱՐԳ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻՆ,
որ կայանալու է Թիֆլիսի Բօրսային շինութեան մէջ (Արմենական բազար, տուն Վարկային Ընկ.) քննութեան առնելու հետեւեալ հարցերը.
1) Քննութիւն և հաստատութիւն Թիֆլիսի Առևտր. Դպրոցի շինութեան նորոգութեան համար պահանջվող ծախքերի նախահաշիւ։
2) Մերացած և չունևոր վաճառականների և նրանց ընտանիքների համար կառուցվելիք Ապաստարանի գեանի գնման հարցը։
3) Քննութիւն և հաստատութիւն Ապաստարանի շինութեան յատակագծի և նախահաշիւ, նոյնպէս և նրա սկզբնական կահաւորման նախահաշիւ։
4) Ցիշեալ Ապաստարանի կառուցման և պահպանման հարցը։
Ներկայ ընդհանուր ժողովը, իբրև երկրորդ ժողով, կը կայանայ որքան անդամ էլ ներկայ լինի։ (առ.) 337. 1—1

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
Կիրակի, մայիսի 13-ին, Ժողովրդական Տանը, գրականութեան ուսուցիչ Մ. ՄԱՏԷՆՃԵԱՆԸ հայերէն լեզուով կը դասախօսէ հետեւեալ նիւթի մասին.
Թիւրքահայ մեծ երգիծաբանը (ՅԱԿՈԲ ՊԱՐՈՆԵԱՆ)
Դասախօսութեան սկիզբն է առաւօտեան ժամը 10½-ին։
Տոմսակները 5 և 10 կոպէկ արժողութեամբ վաճառվում են թատրոնի կասայում։
(առ.) 336. 2—2

По умѣреннымъ цѣнамъ
Новѣйшихъ изящныхъ рисунковъ
ПОЛНОМѢРНЫЕ
ОБОИ
ФАБР. СКЛАДЪ
МАНГИКІАНА
ПУШКИНСКАЯ № 7.
(Կ. Կ.) 50—5 291.

Բժ. Ա. ՇԽԵՆԱՆԻ
„Տուբերկուլոզը, թոքախտը եւ հասարակութիւնը"
Գինն է 25 կոպէկ
Դիմել «Գիր», «Գուտենբերգ», «Կենտրոնական», «Խերդեկել» և „Просвѣщеніе" գրախանութներին և հեղինակին՝ Тифлисъ, Гановская ул. № 15.
(առ.) 327. 3—3

ԲԺԻՇԿ
Գր. ՄԱԿԱՐԵԱՆ
Ներքին եւ երեխայոց
հիւանդութիւններ
Ընդունում է հիւանդներին իր նոր բնակարանում Գանձակայա փողոց, տուն Սէյլանովների, № 18, տէլէֆօն 615.
Առաւօտեան 12—1 ժամը
Երեկոյեան 5—6 ժամը
(Ե.հ.կ.) առ. 819. 100—99

ԲԺԻՇԿ
Ե. Ի. ՄԻՆԱՍԵԱՆՑ
Ներքին, երեխայոց և ստամոքսա-աղիքային հիւանդութիւններ։
Պրոֆ. Mathien-ի մասնագիտական կլինիկայից—Պարիզում։
Ընդունելութիւնը (առաւ. ժ. 9—11. (երեկ. ժ. 5—7.
Ելիզավետինսկայա փող. № 39. տէլ. № 1067.
(Կ.Չ.ու). առ. 179. 100—31

ԿՈՎԿԱՍԵԱՆ
ՀԱՆՔԱՑԻՆ ԶՐԵՐ
Առ. և Ա. Մ.
„ՆԱՐԶԱՆ" | Սեղանատան | „ԷՍՍԷՆՏՈՒԿԻ № 20."
ԲՈՒԺԻՀ
Ծանանցնել ամենքին։
ԷՍՍԷՆՏՈՒԿԵԱՆ (աղի-ալկալեան) №№ 4, 4 նոր, 6, 17, 18, 18 բիւվ. 2, 19, ԲԱՏԱԼԻՆԵԱՆ (անփոխարինելի լուծողական)։ ՍՄԻՐՆՕՎԵԱՆ-ԵՐԿԱԹՑԻՆ (պարունակում է մկնդեղ)։ ԷՍՍԷՆՏՈՒԿԵԱՆ ԼԻՊԵՇԿԱՆԵՐ (վերացնում է տապը)։ ԷՍՍԷՆՏՈՒԿԵԱՆ ԱՂ (փոխարինում է № 17 ջրին)։
ՋՐԵՐԻ ԵՒ ՄԹԵՐԲՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀԵՍՏԻՆ—ТИФЛИСЪ, Гановская, д. Гургенова, №№ 8—10. Тел. 898.
Գլխաւոր պահեստը Վարչութեան կից՝ Պատիգորսկում։ Պրէյս-կուրանտները ձրի։
Դիմել՝ Пятигорскъ, Управленіе водъ.
(Կ.) առ. 224. 39—6

Այսօր, կիրակի, մայիսի 13-ին
ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԴԱՀԼԻՃՈՒՄ
(Դրիբոեդովսկ. փող.) ԿԱՑԱՆԱԼՈՒ Է
ԳՐԱԿԱՆ-ԵՐԱԺՇՏԱԿԱՆ
ԵՐԵԿՈՅԹ
ԾՐԱԳԻՐ. I. Ուսուցիչ Արշ. Յարութիւնեանը խօսելու է «Պատանի» ալմանախի շուրջը, II. «Պատանի» ալմանախի խմբագրութեան նշանակած մրցանակաբաշխութիւնը, III. Համերգ։ Մասնակցում են՝ տ. Սաբին-Գուլս (դաշնակահար), օր. օր. Մահկալեան (երգչուհի), Խանդամեան, պ. պ. Արմէնեան, Սեւումեան, Սարդարեան, Մինասեան և ուրիշներ։
Տեղերի գները 30 կ.-ից մինչև 1 ր., աշակերտները՝ 20 կոպ.։
Սկիզբը երեկոյեան ժամը 8½-ին։
Կարգադրիչ՝ Մ. Էփրիկեան

„ՍՊՈՐՏ" այգում (Михайловскій пр., № 68, հիւանդանոցի շարքում)
Երկուշաբթի, մայիսի 14-ին
ՅՕԳՈՒՏ ՀԱՅՈՒՀԵԱՑ ՈՐԲԱԽՆԱՄ ԸՆԿ.
ԿԱՑԱՆԱԼՈՒ Է
ՄԱՅԻՍԵԱՆ ՄԵԾ ԶԲՕՍԱՆՔ—ՃՈԽ ԾՐԱԳՐՈՎ
Այգին լուսաւորված կը լինի գոյնզգոյն լապտերներով
ՆՈՅԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԻՒՆՆԵՐԻ Թագաւորութեան տօնի առիթով։
Մանկական մարմնամարզութիւն, օդապարիկ, իսկ երեկ. ժամը 7-ին Ցեպպէլինը ճանապարհորդի հետ։ Ժամը 8½—10½-ը շքեղ ֆէյէրվերկ։
Այգում կը նուագեն երկու զինուորական նուագախումբ և սազանդար. կը լինի ամերիկական էժան վաճառք, պտի-շվօ, օղակախաղ և այլն։
Սկիզբը ցերեկվայ ժամը 4-ին։
Մուտքը՝ մեծերի համար 30 կոպ., փոքրերի՝ 20 կոպ.։
Ծանօթ.—Ապրիլի 15-ի համար վերցրած տոմսակները վաւերական են մայիսի 14-ի համար։ (հ. կ.) առ. 320. 3—3

Երկուշաբթի, մայիսի 14-ին
ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱՅԳՈՒՄ տեղի կունենայ
ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԶԲՕՍԱՆՔ
Յօգուտ ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ՀԵՏԵՒԵԱԼ ԾՐԱԳՐՈՎ.—Վիճակախաղ, երաժշտական երկու խումբ, Ցեպպէլին, մանկական խաղեր հմուտ մանկավարժի ղեկավարութեամբ, օղակների խաղ, ձիարշաւ, տումբօլկա, զուշակութիւն, ֆիրեատտի, բաղդի բանալի, բուֆէտ։
ՍԱԶԱՆԴԱՐ, ՍԻՆԷՄԱՏՕԳՐԱՖ, ՊԱՐԵՐ
Ժամը 8-ին հայկական գնացք լապտերներով ու դրօշակներով զարդարված և գեղեցիկ հրավառութիւն։ Սկիզբը ժամը 3-ին։
Մուտքը մեծերի համար 25 կ., երեխաների և ուսանողների համար 15 կ.։
ԱԶԴ.—Ապրիլի 23-ին Մուշտայիդ այգում նշանակված զբօսանքի տոմսակները պահպանում են իրանց ոյժ մայիսի 14-ի համար։
(առ.) 303. 2—2

Կիրակի, մայիսի 13-ին, առաւօտեան ժամը 11-ին, Կովկասի Հայոց Բարեգ. Ընկ. դահլիճում (Абасъ-Абадская № 7) նշանակված է
ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ
ԾԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ
ՕՐԱԿԱՐԳԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԵՆ՝ 1) Բաղուի ճիւղի մասին զեկուցում, 2) Երևանում ճիւղ բաց անելու հարցը, 3) պաշտօնավար անձանց, այն է՝ վարչութեան ինքնակամ հրաժարված 3 անդամի և 5 փոխ.-անդամի, խմբագրական մասնաժողովի հերթով դուրս եկող 3 անդամի և 5 փոխ.-անդամի, վերաստուգիչ յանձնաժողովի 3 անդամի և 2 փոխ.-անդամի ընտրութիւնը և այլ հերթական հարցերի քննութիւնը։
(Կ.) առ. 326. 2—2

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱՅԳԻ
(Միխայլովսկի պրոսպ., Վէտցէլի հիւրանոցի մօտ)
Կիրակի, մայիսի 13-ին տեղի կունենայ
ՅՕԳՈՒՏ ԶՐԻ ՃԱՇԱՐԱՆՆԵՐԻ ԵՒ ԹԷՑԱՐԱՆՆԵՐԻ ԸՆԿ.
ՀՍԿԱՅԱԿԱՆ ԶԲՕՍԱՆՔ
2 ԶԻՆԻՈՐԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԽՈՒՄԲ | ՎԻՃԱԿԱԽԱՂ ՊՏԻ-ՇՎՕ | ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԵՐ ՊԷՏԵՐՈՒՆԿԱ
Волшебный вальсъ
Օպէրէտկա 1 գործող. երաժշտ. Շմիդտհոֆի
Մասնակցութեամբ Ս.-Պետերբուրգի «Բուֆֆ» թատրոնի արտիստ Վ. Գ. ՎԱԼԵՐԻԱՆՕՎԻ, տ. Անդրիեվսկայայի և պ. Անտոնովի.
Ներկայացումից յետոյ Վ. Գ. Վալերիանովը կերգէ զնչուական romances։
Զբօսանքի սկիզբը ցերեկվայ ժամը 4-ին։ Օպէրէտկայի սկիզբը երեկոյեան ժամը 8½-ին։ Հանրամատչելի բուֆէտ։ Այգու մուտքը 30 կոպ.։ Մասուկները և աշակերտաշակերտուհիները վճարում են 20 կոպ.։ Թատրոն մտնելու համար առանձին պէտք է վճարել 20 կոպէկ։ (Կ.) առ. 332. 2—2

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ
յօբելեանի առիթով եղած նախապատրաստական ժողովի կողմից լիազօրված անձինք ընդհանուր ժողովի են հրաւիրում բանասիրողներին համախմբելու թէ ինչ ձևով կարելի է մասնակցել յօբելեանին։
Ժողովը կայանալու է կիրակի, մայիսի 13-ին, երեկոյեան 7½ ժամին, Բարեգործական Ընկերութեան դահլիճում։
Աբեղեան Արտաշես, Աբովեան Սարգիս, Աւետեան Սեդրակ, Լևոնեան Գարեգին, Խունոնց Յովսէփ, Մատէոսեան Մամբրէ, Յարութիւնեան Իսահակ, բժշ. Նաւասարդեան Բագրատ, Սահակեան Սահակ ա. ք., Սպէնդիարեան Յովհաննէս, Տէր-Միրաքեան Յովհաննէս։ 338. 1—1

ԿԻՐԱԿԻ, ՄԱՅԻՍԻ 13-ԻՆ
ԲԺ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ ԱՅԳՈՒՄ, Միքայէլեան փող., № 65
ՅՕԳՈՒՏ ՆՈՐԱՇԷՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ԴՊՐՈՑԻ
տեղի կունենայ
ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԶԲՕՍԱՆՔ
Վերին աստիճանի հետաքրքրական ծրագրով, որի մէջ կը մտնեն ի միջի այլոց նաև պտի-շվօ, տումբօլկա, նշանաղարկ, չինական բիլիարդ, ամերիկական վաճառք, սինեմատօգրաֆ, սազանդար, զինուորական երաժշտախումբ և այլն և այլն։
Սկիզբը ճիշդ ժ. 4½-ին։
Մուտքը մեծերի համար 25 կ., իսկ երեխաների և աշակերտների համար 15 կ.
Վատ եղանակի դէպքում զբօսանքը յետաձգվում է հետեւեալ օրը, մայիսի 14-ին։
առ. 339. 1—1

ՔԱՋԱԼԵՐ ՅՈՐԴՈՐԸ

— Իմ մենակութեան մէջ ես ինձ մենակ չեմ զգում։

Այդպէս է գրում մեզ գաւառական մի գործող մեր երկրի խուլ մի անկիւնից։

Եւ նա բացատրում է.

— Մենակ չեմ զգում ինձ,—ասում է նա,—երբ միւս կուլտուրական գործողների խօսքը հասնում է իմ ականջին, երբ քաջալերական յորդորները պահպանում են իմ արիութիւնը, երբ գործակիցների ջանքերը կապում են ինձ մեր երկրի միւս գործողների հետ։

Այո, նա մենակ չէ։

Նա կապված է մի մեծ գաղափարական ընտանիքի հետ, որը իրագործում է ընդհանուր գործակցութեամբ սիրելի և պաշտելի կուլտուրական նպատակ։

Պէտք է արձանագրել, որ դեռ ևս շատ ու շատ տեղերում ախորժելի չեն գաւառական գործունէութեան պայմանները։ Յաճախ բացակայում են կենցաղավարութեան տարրական պարագաները։ Եւ գործողները ստիպված են հաշտվել մի շարք անպատեհութիւնների և անյարմարութիւնների հետ։

Եւ որքան աւելի ծանր և արտամաղ է դառնում կեանքը, երբ այդ անախորժութիւնների վրա բարդվում է նոյն գործողի բոլորովին մոռացված ու կտրված լինելը կուլտուրական աշխարհից և երբ տեղական միջավայրը յարուցանում է խոչընդոտների մի արշաւանք բարեշրջող գործունէութեան դէմ։

Համեմատաբար աւելի մեծ տրամադրութիւն է ստեղծվում գործողի համար, երբ նա զգում է, թէ նա մէկն է բազմաթիւ գործողներից, որոնք ցրված երկրի զանազան մասերում՝ հարթում են ժողովրդի կուլտու-

բական զարգացման և առաջադիմութեան ուղիները։ Նրա կեանքը դրանով չէ դրվում աւելի աջող պայմանների մէջ, բայց գործողի ներքին բարոյական տրամադրութիւնը բարձրանում է մի աստիճան և նա զգում է, որ ինքը նպաստում է պատրաստելու արդաւանդ հող ապագայ գործողների համար։

Մեր գաւառական գործողները՝ ուսուցիչները, բժիշկները, լրագրական թղթակիցները և այլ գործող ու մտածող անձեր շատ և շատ կարօտ են բարոյական քաջալերութեան և բարոյական համազգացութեան արտայայտութիւններին։ Նրանց համար թանգ է համանման գործողների, կենտրոնական և գաւառական վայրերի մտածողների, ղեկավարող անձնաւորութիւնների բարոյական կապը։ Նրանց համար էական և կարևոր է մտքերի և զգացմունքների մշտական փոխանակութիւնը, փորձերի և իրանց դիտողութիւնների փոխադարձաբար միմեանց հաղորդելը։

Եւ այդ բանում մեծապէս նպաստել է և նպաստում է մամուլը, հրապարակային խօսքի օրգանը, ցոլացնելով իր էջերում երկրի մէջ կատարվող եւրոյթները, արձագանք դառնալով կեանքի մէջ նկատվող մտաւոր և բարոյական բարեփոխութիւններին, պահպանելով հեռաւոր տեղերում աշխատող-գործողների մէջ ազնիւ կապ, խօսքի հաղորդակցութիւն և փոխադարձ իրախուսանքներ միմեանց համար։

«Մշակը» առանձին նշանակութիւն է տուել երկրի մէջ կատարվող կուլտուրական գործունէութեան արտայայտութիւններին և ամեն տեսակ ջանք է գործ դրել իրախուսելու հասարակաշէն նախաձեռնութիւնները, ջատագովելու նոր գործի առաջին նուաճումները, պաշտպանելու արդիւնարար ձեռնարկութիւնների գոյութիւնը և զարգացումը։

Քառասուն տարի շարունակ «Մշակը» հրաւէր է կարդում կուլտուրական գործունէութեան և փաստաբանում է տեղական ինքնուրոյն ձեռներէցութեան ամեն մի արտայայտութիւն։

Այսօր, ինչպէս և անցեալում, վաղը, ինչպէս և այսօր, մեր համակրութիւնը և քաջալերութիւնը տեղական ընդարձակ ինքնագործութեան կողմն են։

Թող հասարակական կուլտուրական ասպարէզի վրա աշխատող մերձաւոր և հեռաւոր մեր գործողները, գաւառական մեր իրականութեան մէջ յղկվող ժողովրդական առաջադիմութեան ռահվիրաները, հանրային շահերի անխախտելիութեան պաշտպան զինուորագրվողները նորանոր իրախոյսներ ստանան աւելի ևս մեծ կուլտուրական նուաճումների համար։

Քառասնամեայ «Մշակը» ամենախոշոր ներկայացուցիչն է եղել բարոյական մեծ քաջալերութեան երկրի գործողների համար և այսօր նա դարձեալ երիտասարդ ոգևորութեամբ ողջոյններ է ուղարկում բոլոր ազնիւ հոգիներին, որոնք ճգնում և ջանում են լուծել մեր առաջ դրված ժողովրդական մեծ կարիքների խելացի բաւարարութեան վեհագոյն խնդիրը։

Ա. Ջալանթար

ԼՎՈՎԻ ԴԵՊՔԵՐԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
11 մայիսի

Պետերբուրգ.—Պաշտօնական։ Լվովում մայիսի 6-ին տեղի ունեցած դէպքի առիթով։ Ցեղեկատու Բիւրօն լիազօրված է հաղորդել հետևեալ հեռագիրները։

Հօֆմէյստէր Սազօնովի գաղտնի հեռագիրը Վիէննայի դեսպանին մայիսի 7-ին. «Մեզ հասած տեղեկութիւնների համաձայն, Լվովում, Միցկէվիչի արձանի մօտ բազմահազարեան ամբոխը հակառուսական ցոյց է կատարել և այրել է Թագաւոր Կայսրի պատկերը՝ երգեր երգելով։ Ի նկատի ունենալով՝ որ այդ դէպքը անկասկած և բնականաբար վրդովմունք առաջ կը բերէ Ռուսաստանում, եթէ միայն նա տեղի է ունեցել, մենք շատ մեծ լուրջ նշանակութիւն ենք տալիս այդ դէպքի ճշգրիտ լուսաբանութեան։ Հաճեցէք այդ մասին քանակցել անձամբ կոմս Բերհտօլդի հետ և հետևանքի մասին փութով հեռագրել ինձ»։

Վիէննայի ռուսաց դեսպանի հեռագիր-պատասխանը արտաքին գործերի մինիստրին. «Վիէննա, մայիսի 8-ին։ Այս րոպէիս տեսայ արտաքին գործերի մինիստրին, որը յայտնեց, թէ ոչ ինքը և ոչ էլ աւստրիական կառավարութիւնը տեղեկութիւններ չեն ստացել Թագաւոր Կայսրի նուիրական անձի պատկերի այրման դէպքի մասին։ Նա կը պահանջէ ամենաեռանդուն և շուտափոյթ քննութիւն, եթէ մի այդպիսի դէպք, արդարև, տեղի է ունեցել։ Նա էլ նոյնքան լուրջ նշանակութիւն է տալիս, ինչպէս և դուք, բոլոր կատարված անցքերի պարզաբանութեանը։ Տեղեկութիւնները խոստացաւ տալ այսօր ևեթ ներքին գործերի մինիստրից ստանալուն պէս։ Կառավարութիւնը լիակատար բաւարարութիւն կը տայ հաստատվելու դէպքում»։

Վիէննայի Կայսերական դեսպանի գաղտնի հեռագիրը (շարունակութիւն նախորդի) Սազօնովին. «Ես յաջորդաբար ստացայ արտաքին գործերի մինիստրից հետևեալ նամակները. 1) «Ես հէնց այս րոպէիս ստացայ հեռախօսով զեկուցում ներքին գործերի մինիստրից, որ նա մինչև այժմ չունի ոչ մի (զեկուցում) այն ցոյցերի վերաբերեալ, որոնց մասին դուք մատնանշել էիք։ Մինիստրը անմիջական կերպով տեղեկութիւններ հարցրեց Լվովում գտնվող համապատասխան իշխանութիւններից»։ 2) «Ներքին գործերի մինիստրութեան մէջ մինչև ներկայ րոպէն ստացված տեղեկութիւնները Լվովի ցոյցերի վերաբերմամբ այնքան անորոշ են ու թերի, որ անհնարին է դառնում որոշ կարծիք կազմել յատկապէս այն գործի մասին, որի առիթով դուք այսօր առաւօտեան յիշում էիք։ Այդ ի նկատի ունենալով՝ ես խնդրում եմ ձեզ թոյլ տալ ինձ վաղը նորից խօսել այդ միջադէպի մասին։ Մեր գործերի հաւատարմատարը Պետերբուրգում այդ առիթով խօսել է պ. Սազօնովի հետ, և այդ խօսակցութիւնը համապատասխանում է մեր այսօրվայ խօսացածներին»։ Ես պատասխանեցի արտաքին գործերի մինիստրին, որ հէնց այս րոպէիս ես ստացել եմ Լվովի «Прикарпатская Русь» լրագիրը, որը նկարագրում է ճիշդ մանրամասնութիւնները այդ քրտնեալի անցքերի։ Այդ յօդուածը, անկասկած, կը տպագրվի մեր լրագիրներում և շատ ճնշող տպաւորութիւն կը գործի, որի վրա և ես հրաւիրում եմ նրա ուշադրութիւնը։ Կոմս Բերհտօլդը զգուշացրեց ինձ հեռախօսով, որ կայցելի ինձ երեկոյեան ժամը 10-ին, ներքին գործերի մինիստրի հետ տեսակցելուց յետոյ»։

Վիէննայի կայսերական դեսպանի նոր հեռագիրը հօֆմէյստեր Սազօնովին մայիսի 8-ից. «Այսօր երեկոյեան ինձ մօտ մտաւ արտաքին գործերի մինիստրը և հաղորդեց, որ նա ինձ չէ կարող վերջնական պատասխան տալ, որովհետև քննութիւնը դեռ չէ աւարտված. նա հաստատապէս մտադիր է ներքին գործերի մինիստրի հետ միասին քննել այն բոլոր միջոցները, որ հնարաւոր կը լինի ձեռք առնել ներկայ դէպքում, և յետոյ զեկուցել համապատասխան պաշտօնական հաղորդագրութիւն Վիէննայի և Լվովի լրագիրների մէջ, որպէսզի այդ միջոցով աշխատվի գործված տպաւորութիւնը ջնջել և արտայայտել աւստրօ-ունգարական կառավարութեան իսկական զգացմունքները դէպի այդ անցքը»։

Վիէննայի դեսպանի պաշտօնական հեռագիրը հօֆմէյստեր Սազօնովին մայիսի 9-ից. «Կիսապաշտօնական «Ֆրենդենբլատ» և Լվովի փուխարքայի պաշտօնական լրագիրներում վաղը լոյս կը տեսնի հետևեալ հաղորդագրութիւնը. «Տեղական և արտասահմանեան մի քանի լրագիրներ լուր տարածեցին, թէ այս մայիսի 6-ին Թօրմշչինայի անջատման դէմ գումարված միտինգի ժամանակ Լվովում ամբողջ ժողովրդի ներկայութեամբ այրվել են Ռուսաց Կայսրի և Կայսրուհու պատկերները։ Եթէ այդպիսի փաստ իրօք տեղի է ունեցել, ի հարկէ, նա պէտք է արհամարհանայ ամենախորին զայրոյթի, իբրև մի գործողութիւն, որին նոյնիսկ անուն տալ չէ կարելի. սակայն պէտք է շեշտել, որ փաստի ճշդութիւնը կարելի չեղաւ ստուգել։ Որքան կարողացել է այդ առիթով կատարված քննութիւնը պարզել, այն րոպէին, երբ ժողովը վերջանալուց յետոյ Միցկէվիչի արձանը շրջապատող ամբոխը սկսեց ցրվել, արձանի պատուանդանի վրա ամբոխի մէջ երևաց մի թեթև բոց և աղաղակ բարձրացաւ։ Ներկայ եղող ոստիկանական պաշտօնեաները, որոնք քիչ հեռու էին կանգնած, անկարող էին անմիջապէս որևէ միջոց ձեռք առնել միջադէպի անակնկալութեան պատճառով։ Նոյն իսկ արձանից հեռու կանգնած ցուցարարներն էլ այն րոպէին չը հասկացան գործի եղելութիւնը։ Ոստիկանութեան տեղեկութիւնները, հիմնված՝ ամբոխի մէջ տարածված լուրերի հիման վրա, վկայում են, որ մէկը ուսանող երիտասարդութիւնից ձողի վրա բարձրացրել էր մի կարասն, որի վրա իբրև թէ նկարված են եղել Ցարի ու Ցարի Ընտանիքի պատկերները։ Մենք յոյս ունենք, որ այսուհետև չէն կրկնվի այդպիսի միջադէպեր, որոնք առիթ են տալիս այդպիսի ցաւալի մեկնութիւնների»։

ՅՈՒԶՄՈՒՆՔՆԵՐ ԲՈՒԴԱՊԵՇՏՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
11 մայիսի

Վիէննա.—«Կօր. Բիւրօյին» հաղորդում են Բուդապեշտից, որ մի քանի փողոցներում ցոյցերի ժամանակ ջարդվեցին լապտերները։ Փողոցում ցուցարար Վայցները, որ բռնել էր զինուորի հրացանը, սպանվեց։ Բանուորները ներս խուժեցին ասֆալտի ընկերութեան գրասենեակը, դուրս հանեցին գրասենեակի գրքերն ու այրեցին։ Քարուքանդ արվեց էլեքտրաքարշի պարկը։ Հաղորդում են հինգ հրդեհի մասին։ Ամբոխը կրակում էր ոստիկանութեան և զօրքի վրա, որոնք պատասխանում էին։ Ոստիկանութիւնը հեռևեց ցուցարարներին աւտոմոբիլներով։ Կալանաւորվեցին չորս մարդ։ Կայարանները պաշտպանում են զօրքերը։ Էլեքտրաքարշը չէ երթևեկում։ Կանչված են զօրքեր։

—

Բուդապեշտ. — Զը նայած զօրքերի գալստեան, ցոյցերը քաղաքում երեկոյեան շարունակվեցին։ Շատ տների պատուհանները ջարդվեցին։ Վօյնեցի կուսակցութեան բանուոր պատգամաւորի տան առաջ ռումբ նետվեց։ Ոչ ոք չը վնասվեց։ Ցիսի ընակարանի վրա գնդակներ արձակվեցին, բայց ոչ ոք չը վիրաւորվեց։ Ցեղի ունեցան նոր ընդհարումներ ոստիկանութեան և զօրքերի հետ, որ կրակ բացեց ցուցարարների վրա։ Օրվայ ընթացքում կատարվեցին 30 հրդեհում, սպանվեցին 7, վիրաւորվեցին 160 մարդ։ Բակոս կայարանում բանուորները գրաւեցին երկու գնացք։ Երեկոյեան սոցիալ-դեմոկրատական կուսակցութեան կոմիտէները կոչ հրատարակեց յանուն բանուորների, որով առաջարկվում է հանգիստ մնալ և աշխատանքները առաւօտեան վերսկսել։ Ժամը 12-ի մօտերը անկարգութիւնները դադարեցին։

Պատգամաւորների պալատ։ Ապօնին բողոքում է մայիսի 19-ի դէպքերի դէմ։ Բողոքում է նաև Լվովչին, որի ճառի ժամանակ Պօլօնին բացագանչում է. «Փողոցներում դպրոցականներին սպանում են»։ Զախակողմեանները պահանջում են նիստը ընդհատել։ Նախագահը յայտնում է, որ եթէ փողոցի դէպքերի լուրերը ճիշդ էլ լինեն, այնու ամենայնիւ այդ հանգամանքը չէ ազատում պալատին իր պարտականութիւնը կատարելու պարտաւորութիւնից (ծափեր աջից, աղմուկ ձախից)։ Բակոնին յայտնում է, որ Պոդմանեցկին զրպարտում է, ասելով թէ անկարգութիւնների պատճառը Իւստի կուսակցութիւնն է։ Յետոյ նիստի դռները փակվում են։ Կօշուտը մատնանշում է, որ եթէ ընտրողական բարենորոգումը գործադրվեր, այն ժամանակ անկարգութիւնները էլ տեղի չէին ունենայ. Ժամանակն է հաշտվել գործաթողների հետ։ Նիստը յայտարարվեց բաց։ Նախագահը ասում է, որ օրակարգի քննութեան ժամանակը արդէն լրացաւ. պալատը մի օր ևս կորցրեց (ծափեր աջից, աղմուկ ձախից)։

Առաւօտը քաղաքում լիակատար հանգստութիւն էր։ Աշխատանքները ամենուրեք վերսկսվեցին։

Ընդհանուր գործադուլ յայտարարվեց Դէբրեչինում և Նաժիկենդում։

Կարգ ու կանոնը վերականգնվեց։ Վայցէնէր փողոցի մուտքը բռնված է զօրքերով, որոնք գրոհ տուին ցուցարարների վրա, վիրաւորելով նրանցից 18 հոգու։ Ցուցարարները ջարդեցին 7000 գազային լապտերներ։

—

Վիէննա.—Պատգամաւորների պալատ։ Գերմանական սոցիալ-դեմոկրատ Ադլէր Բուդապեշտի դէպքերի առիթով յայտնեց, որ յօդուտ զինուորական բարենորոգման մղվող կռիւը հանդիսանում է մի խումբ մագնատների փորձ՝ ոտնահարել Ունգարիայի ժողովուրդների իրաւունքները, չը տալով գահից խոստացված ընդհանուր ընտրողական իրաւունքը։ Հեռաւորը բողոքում է համապետական զօրքի Բուդապեշտում միջամտելու դէմ։ Փոխ-նախագահը յայտնեց, որ ցաւում է արիւնահեղութեան համար, սակայն պրեզիդիումը չէ մատնանշում զօրքերի կարգադրութիւններին։ Ուկրաինական ակումբի նախագահ Լէվիցկին բողոքում է Լվովի համալսարանի 250-ամեայ տօնման դէմ, որովհետև այդ համալսարանը հաստատվել է աւստրիական կայսրից։ Լեհ Գլօմբիչնսկին ապացուցանում է, որ համալսարանը հիմնվել է 1661 թ. Եան Կազիմիրի ձեռքով. լեհերը չեն կարող համաձայնել, որպէսզի համալսարան հիմնվի Լվովում։

—

Բուդապեշտ. — Մետաղագործական գործարանի բանուորները մերժեցին ընդունել սոցիալիստների կուսակցութեան առաջարկութիւնը՝ վերսկսել աշխատանքները։ Նրանց միացան ուրիշ բանուորներ և այսօր միասին նոր անկարգութիւններ առաջացրին. քանդեցին և աւերեցին տրամվայի վագոնները, փորձեցին քանդել եկեղեցին, յարձակվեցին ոստիկանատան վրա և փողոց նետելով կահ-կարասիքը՝ վառեցին դաղը և հրդեհեցին փայտի պահեստը՝ արգելելով հրդեհաշէջներին հանգցնել կրակը. կրակեցին եկեղեցու վրա, ուր ժամասացութիւն էր կատարվում։ Ոստիկանութեան հետ ընդհարման ժամանակ մի քանի մարդիկ վիրաւորվեցին։ 500 ցուցարարներ փորձեցին կրակել էլեքտրական կայարանը, բայց ժանդարմները և ոստիկանները ցրեցին նրանց։

Միտինգից յետոյ ցուցարարները փորձեցին քաղաքային այգում աւերել անգլիական այգին, և երբ ոստիկանութիւնը փորձեց խափանել, նրանք հրացանաձգութիւն սկսեցին ոստիկանութեան հետ։

Կէսօրին ցուցարարները չորրորդ անգամ յարձակում գործեցին Վէյցէնէր փողոցի մի ֆաբրիկայի վրա։ Երբ ժանդարմները մտան այդտեղ գտնված շտեմարանը, ցուցարարները հրդեհեցին նրան։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
11 մայիսի

Բեսկիդէ.—Թագաւորի, օգոստափառ անձերի, օտարազգի միապետների և կառավարութիւնների ներկայութեամբ կայացաւ դանիական թագաւորի հանդիսաւոր թաղումը։

—

Պետերբուրգ.—Պետ. Դումայի խորհրդակցութիւնը չընդունեց ազգային ֆրակցիայի ներկայացրած հարցապնդումը Լվովում տեղի ունեցած ցոյցերի առիթով, որովհետև հարցապնդումը, հակառակ Հիմնական Օրէնքների 12-րդ յօդուածի, վերաբերում է արտաքին քաղաքականութեան, որը կազմում է Կայսերական իշխանութեան իրաւասութիւնը, և հակառակ Դումայի կանոնադրութեան 33-րդ յօդուածի՝ վերաբերում է ոչ թէ ռուս, այլ օտարազգի իշխանութիւնների անօրինաչափ գործողութիւններին։

—

Լոնդոն.—Նաւահանգստային բանուորների գործադուլը սպառնում է լուրջ հետևանքներ ունենալ։

—

Բերլին.—Կոմս Բերհտօլդ և երկար խորհրդակցութիւն ունեցաւ կանցլերի հետ։ Կայսրը կոմսին շնորհեց Սև Արծուի շքանշան։

—

Ռօմ.—Կոտուրի-խան Սըմկօն հաղորդում է, որ 400 թիւրք ասկեր և քիւրդ փախել են Դավերիկօ և Ցէրասաբադ գիւղերը։ Հրացանաձգութեան մէջ Սըմկօն կորցրեց 3 սպանված և 3 վիրաւոր։ Չորս թիւրք զինուոր գերի ընկան։ Թիւրքերը և քիւրդերը նահանջեցին մինչև Պարսկաստանի սահմանը։

—

Վաշինգտոն.—Կառավարութիւնը կուբա ուղարկեց նաւատիների զօրախումբ ամերիկացիների կեանքն ու գոյքը պաշտպանելու համար։

ԹԻՒՐՔԻԱ ԵՒ ԻՏԱԼԻԱ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
11 մայիսի

Սալոնիկ.—Շատպով Կոսսօվայի վիլայէթը մեկնեց ներքին գործերի մինիստրը, որ նոր էր վերադարձել Ալբանիայից։

Ապատամբ ալբանները Ուսկիւբում մեծ պետութիւնների հիւպատոսներին յանձնեցին մի յուշագիր հետևեալ պահանջներով. Ալբանիայի աւտոնոմիա, առանձին ալբանական դրօշակ, նշանակել Ալբանիայի նահանգապետ ալբան իշխանների սերունդից, Ալբանիայում՝ պաշտօնեաներին փոխարինել ալբաններով, պաշտօնական լեզուն լինելու է ալբաներէն, տառերը լատինական։ այս պահանջների իրագործումը երաշխաւորելու են մեծ պետութիւնները։

—

Կ. Պոլիս.—Զինուորական մինիստրութեան տեղեկութիւնների համաձայն, Բօդօսի գօրքի մի մասն է միայն անձնատուր եղել։ Մնացածները վարում են պարտիզանական կռիւներ իտալացիների հետ։

Բէնգազիից հաղորդում են, որ մայիսի 3-ին յետ մղվեց իտալացիների գրոհը։ Թիւրքաց հրամանատարը հաղորդում է, որ իտալացիք ռմբակոծեցին Դուբաբը և զօրք իջեցնելու ժամանակ յետ մղվեցին։

«Թանինը» պնդում է, թէ անհրաժեշտ է Մակեդոնիայի վարչական պաշտօնները յանձնել եւրոպացիներին։ Դրա հետ միասին Բ. Դուռը քննում է Մակեդոնիայի բարենորոգումների մասնաժողով հաստատելու հարցը, որի նախագահ լինելու է անպլիացի Դրէվը։

—

Կ. Պոլիս.—Ներքին գործերի մինիստրի ալբան պարագլուխների հետ բանակցութեան շնորհիւ ալբաններին տրված է ժամանակ անձնատուր լինելու յօժարակամ մինչև մայիսի 12-ը։ Զը հնազանդվելու դէպքում ալբանների դէմ կը սկսվեն պատերազմական գործողութիւններ։

Իտալական նաւատորմը կանգնած է Քիօսի մօտերը, որի հետ հաղորդակցութիւնը խզված է։

Սպասվում է փոփոխութիւն կաբինէտի կազմի մէջ։ Ֆինանսների մինիստր նշանակվում է Զավիդը, նրա տեղ ճան. հաղ. մինիստր նշանակվում է նախկին մինիստր պատգամաւոր հայազգի Հալաճեանը, ժող. լուս. մինիստր՝ «Թանինի» խմբագիր նախկին մինիստր Իզմայիլ-Հակի-Բաբան-Զադէն։

Եկան առաջին անգամ նաւեր Եգէյեան ծովից՝ անցնելով Դարդանէլով։

—

Հռոմ.—Բոլոնում, Միլանում և Կասինոյում տեղի ունեցան անիշխանականների ձերբակալութիւններ թագաւորի կեանքի դէմ կատարված մահափորձի առիթով։

Ստեֆանիի գործակալութեանը հաղորդում են Տրիպոլիսից, որ թշնամու զօրամասերը Լինսարուի մօտերը ցիր ու ցան եղան արտիլերիական կրակից։ Հետևեալ առաւօտ թշնամու հետքն անգամ չը գտնվեց։

Իտալական ամբողջ մամուլը Թիւրքիայից իտալացիներին աքսորելը համարում է բարբարոս վարմունք, որ խախտում է միջազգային իրաւունքի սկզբունքը։

ՀԵՌԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
11 մայիսի

Ուրզա.—Կօբղոյից ստացված են մանաւոր տեղեկութիւններ, թէ Տուրքէստի դալայ-լաման համաձայն է միանալ Խալխին։

Ներքին գործերի մինիստրի նախաձեռնութեամբ խուսուխտային հաւատարմութեան երդում տուին բոլոր հինգ մինիստրութեան պաշտօնեաները մինիստրների հետ։

—

Պէկին.—Զը նայած որ ռուսաց դեսպանին հաւատացվեց, թէ Սինցզիանում անկարգութիւններ չը կան, չինական կառավարութիւնը նահանգապետ նշանակեց նախկին զօրահրամանատարին պատուիրելով նրան վերջ դնել ապատամբութեան։

Արևմտեան Մօնգոլիա կազմակերպելու հարցին նուիրված ազգային ժողովի նիստը այն աստիճանի աղմկալի էր, որ նախագահը հարկադրված եղաւ նիստը փակել։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ՄՇԱԿԻ» ՑՕՐԵԼԵԱՆԻ ՇՈՒՐՋԸ

—

Թիֆլիսի քաղաքային ուղղաւան իր վերջին նիստում հարկաւոր գտնելով, որ քաղաքը մասնակցէ «Մշակի» յօբելեանին՝ որոշեց զեկուցանել այդ մասին դումային՝ պատգամաւորութեամբ ողջունելու համար։

—

Վրաց ժողովրդի մէջ Գրագիտութիւն Տարածող Վրաց Ընկերութիւնը որոշել է մասնակցել «Մշակի» յօբելեանին։

—

Վաղարշապատից մեզ գրում են. «Անցեալ օրը «Մշակի» 40-ամեակի առիթով կանանց ժողով եղաւ և որոշվեց իրանց լումայով օգնել Գ. Արծրունու կանանց վերաբերեալ գրուածքները տպագրելու համար»։

—

Մերվ, 7 մայիսի

Երէկ, ամսիս 6-ին, տեղի ունեցած ընդհանուր ժողովում «Մշակի» յօբելեանին մասնակցելու համար ընտրվեց 5 հոգուց կազմված մի յանձնաժողով՝ այն է Ալ. ք. Պապովեան, Աբր. ք. Ոսկանեան, Ս. Տէր-Յարութիւնեան, տիրուհի Պապովեան և Սօֆիա Ղարիբեան, որոնք պէտք է որոշեն, թէ ի՛նչ ձևով մասնակցել յօբելեանին։ Յանձնաժողովը մտադիր է կամ կամաւոր հանգանակութեան դիմել և կամ տալ մի երեկոյթ՝ ամբողջովին նուիրված «Մշակի» 40-ամեայ գործունէութեան նիւթականը յատկացնելով «Մշակի» ֆոնդին։ Ս. Զանգեզուրեան

—

(Նամակ խմբագրութեան)

Թիֆլիս, 12 մայիսի

Յօբելեանական Յանձնաժողովը շնորհակալութեամբ ստացաւ «Մշակի» խմբ. միջոցով հետևեալ նուէրները «Մշակի» ֆոնդի համար. 1) Բօստօվից պ. Գր. Զալխուշեանից 750 ռուբլի (որ նուիրել են հետևեալ անձինք. Հայոց Բարեգ. Ընկերութիւնը 300 ռ., Գ. Զալխուշեան՝ 25 ռ., Կ. Խաչատրեան՝ 25 ռ., Շլթեան՝ 25 ռ., Վ. Այվազեան՝ 25 ռ., Ս. Զիլէլեգեան՝ 25 ռ., Կ. Թիթրեան՝ 25 ռ., Ե. Խորվաթեան՝ 25 ռ., եղբ. Միրզաիզեան՝ 25 ռ., Ա. Բիստեան՝ 25 ռ., Լ. Ուռանեան 25 ռ., եղբ. Մելքոնեան-Եղիկեան՝ 25 ռ., Մ. Մելքոնեան-Եղիկեան՝ 25 ռ., Ա. Զուգայեան՝ 25 ռ., եղբ. Ուռնեան՝ 25 ռ., Ս. Անանեան՝ 20 ռ., եղբ. Խուդավերդեան՝ 20 ռ., եղբ. Աւետիքեան՝ 15 ռ., Ա. Ամիրեան՝ 10 ռ. և Ա. Աֆանասեան 10 ռ.), 2) Թիֆլիսում, Սարգիս Խարազանից՝ 25 ռ.; 3) Բիրմանիայից, Բանգոն քաղաքից, Հայաբաձում խաչակիր քահանայ Ս. Վարդանեանից՝ 5 ռուբլի։ Գումարն 780 ռուբլի։ Նախկին ստացածների հետ միասին (տես «Մշակ» № 100), ընդամենը ստացված է 14,911 ռ. 22 կ.։

Յանձնաժողով

Գաղատիայի (Էնկիւրի) թեմի առաջնորդ Բարգէն եպիսկոպոսը մի շրջաբերական է ուղարկել իր թեմին, որից առաջ ենք բերում հետևեալ կտորը։

Մայիս 26-ին Թիֆլիսի մէջ պիտի կատարուի «Մշակ» լրագրի քառասնամեակը։ «Մշակը», զոր հիմնած է հանգուցեալ տաղանդաւոր հրապարակագիր Գրիգոր Արծրունի, ստուգապէս եղած է առաջին ռահվիրան մեր ուսուցչական ազգակիցներու մէջ՝ ազգային առաջադիմական գաղափարներու մշակութեան և իր հիմնադրութենէն ի վեր 40 տարի շարունակ չէ լքած իր մահը՝ իր նուիրական աշխատանքին մէջ։ Կարժէ որ բոլոր հայեր խնդակցին այս քառասնամեակին առթիւ «Մշակին» և «Մշակով» ուսումնասիրութեան։

Հասատիրու համար, թէ Ռուսիոյ և Թիւրքիոյ հայոց մէջ ինչպէս արիւնի, նոյնպէս սրտի և մաքի կապերը խզուած չեն, նոյն իսկ բանապետական մահաշափ արդիւնքներէն եռքը, մենք, իբր առաջնորդ Գաղատիոյ վիճակին և ջերմ ջատագով Ռուսիոյ և Թիւրքիոյ հայոց իրերաձայնութեան նորագոյն մշակութեան, հրաւէր կը կարդանք ձեզի և ձեզմով վիճակիս բոլոր ազգայինները, որպէս զի օգտուելով «Մշակի» քառասնամեակի առնախմբութենէն՝ առաջին քայլը իրենք առնեն և իրենց կամաւոր նուէրներով գեղեցիկ գրաւականն մը ընծայեն ազգային եղբայրակցութեան գաղափարին գործադրութեան և այսպէս առաջին շարժումը տուած ըլլան այն տեսական յարաբերութեան, որ պէտք է կերտուի հայ հայութեան այս երկու ամենախոշոր հատուածներուն մէջ։

Շատ ուշադրութիւն պէտք է ընել, որ այս պարագային նուէրին քանակն աւելի արժէք ունեցողը այս ազգային շարժումն է, այս եղբայրական ժէտն է։

Ո՞Վ ՉԷ ՏԵՍԵԼ

Ո՞վ չէ տեսել խոնաւ, անշուք ներքնայարկերի բնակիչներին, ձախորդ պայմանների վերի դարձած, դալուկ նիհար դէմքերով շրջելիս փողոցներում, ձեռք կարկառած անց ու դարձ անցորդներին։ Այդ մեր կեանքի իրական երևոյթներից մէկն է, որը համատարած չարիք դարձած՝ լայն չափեր է ընդունում, իր գոյութիւնը աւելի քան զգալի դարձնելով համայն մարդկութեան։

Բայց արդեօք տեսել էք ներքնայարկերի բնակիչներին, շատ յաճախ բազմամարդ ընտանիքի, որ ամեն ճիգ են գործ դնում՝ ինքնուրոյն կերպով, առանց կողմնակի օգնութեան օրվայ ապրուստ հայթայթել՝ սուվից, քաղցից ազատուելու համար։ Նրանք հրէշային հոգսերի տակ ճնշված յամառութեամբ ոքնում են կոխ մղել թշուառութեան անողոք ճիրաններում, գուրգուրելով, գգվելով իրանց հոգում այն խանդաղատին զգացմունքը, որ ազատում են սովամահ լինելուց իրանց անմեղ զաւակներին, իրանց օրբացած բալիկներին։

Եւ այդ անմեղ որբուկները իրանց մանուկ հասակից ենթակայ են անվերջ զրկանքների, չը կարողանալով դիմադրել՝ զոհ են գնում թշուառութեան։

Ահա որտեղ է հարկաւոր բարեգործութիւնը, գիտակից, լուրջ անձանց բարոյական, գործնական աշակցութիւնը, նպաստելով ընտանիքին աշխատանք մատակարարելու, արհեստ սովորելու՝ բարեաւելով նրա աննախանձելի կացութիւնը և կամ թէ ընդունելով որբանոց նորաբողջ մանուկներին։ Այդ բոլորն էլ դաղափարական և գեղեցիկ բարեգործութիւններ են, որոնք գալիս են օգնելու անողոք ճակատագրին մատնված, ձախորդ պայմանների գերի աղնիւ մարդկանց։ Ներկայ բօսէում առիթը ինքը ներկայանում է ամեն մի անհատի ասպարէզ հանելու իր հոգեկան հարստութիւնները՝ իր ոյժերի համեմատ նպաստելով ազգային, հասարակական հիմնարկութիւններին, որոնք տոգորված են անոյշին օգնելու անզուսպ տենչանքով։ Նրանցից մէկը, Որբանոցի Ընկերութիւնը, որը իր որբանոցի յարկի տակ պատսպարել է 25 երկսեռ որբերի, երկուշաբթի, մայիսի 14-ին, «Սաթրա» այգում կազմակերպում է զբօսանք, հաճոյված լինելով որ հայ դիտակից հասարակութիւնը իր ներկայութեամբ կը յուսադրէ Ընկերութեան վարիչներին աւելի եռանդով առաջ տանել որբերին խնամելու՝ ծով ցաւերից մէկին օգնելու գաղափարական գործը։

Ս. Պետրոսեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Վաղարշապատ, 9 մայիսի

«Մշակի» ընթերցողներին յայտնի էր, որ Վեհափառ Կաթողիկոսը ամսոյս 12-ին պէտք է գնար Պետերբուրգ Նորին Կայսերական Մեծութեանը ներկայանալու, հաստատութեան հրովարտակը և վեղարի խաչը ստանալու, բայց այսօր հաստատ տեղեկացանք, որ վանքը հեռագիր է ստացել, որով յայտնվում է, թէ Կաթողիկոսի Պետերբուրգ գնալը յետաձգվել է անորոշ ժամանակով։ Պատճառը դանիական թագաւորի անսպասելի մահն է։

Տեղս են եկել Պարսկաստանի և Հնդկաստանի առաջնորդ Սահակ արքեպիսկոպոս Այվազեան, Շամախու թեմական դպրոցների տեսուչ Ներսէս վարդապետ Տէր-Մելքոնեան և Նոր-Բայազետի գործակալ Արտակ վարդապետ Սմբատեան։

Վ. ք. Ազաղաղեան

ԻՐԱՏԵՍԱԿ ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ

Մադրասա (Շամախու գ.), 5 մայիսի

Մեր երիտասարդների աշխարհում տարածված է մի շատ վատ սովորութիւն, որ յաճախ տալիս է ողբերգական արդիւնք։ Այդ սովորութիւնը, որ իր սկզբնական շրջանում մի տեսակ խաղ է կեանքի հետ, իր վերջաւորութեան մէջ դառնում է մի ուրոյն տեսակի ինքնասպանութիւն, որպիսի հանդամանքը աւելացնում է վաղաժամ բացվող գերեզմանների թիւը։

Մեզանում զինուորութեան վրա նայվում է իբրև աքսորի վրա։ Ուստի փողաւոր մարդիկ իրանց որդոց աշխատում են փրկել նրանից ամենաոչ դրամի ոյժով, իսկ չքաւոր մարդկանցից ոմանք, հարուստներից յետ չը մնալու համար, լուսիկան առաջադրում են իրանց որդոց՝ նոյն այն ծառայութիւնից ազատվելու որևէ մէկ միջոց։ Ամենաաւելի միջոցը, որ գործադրում են միայն այդ դէպքում հնազանդ որդիները, դա մախօրկի ջուր խմելն է։ Այդ մահացնող ջուրը, շնորհիւ նիկոտինի, անմիջապէս ընդունում է նրանց և զինուորութեան փոխարէն՝ ծառայեցնում անկողնին։ Նրանք, իրօք, ազատվում են զինուորական պարտականութիւնները կատարելուց և վերադառնում են հայրենիք առողջանալու։

Հայրենիքում, սակայն, նրանք չեն ազատվում։ Այլ իրանց չքաւոր ծնողներին անբաւ նեղութիւն, վիշտ և դառնութիւն պատճառելով, նաև նրանց աղքատիկ գրպանը մինչև վերջին կոպէկը բժշկի առաջ թափ տալով՝ ընդմիշտ հրաժարվում են այս աշխարհի ամեն տեսակ ծառայութիւններից և մտնում են սառը գերեզմանի մէջ...

Անցեալի վէրքեր չէ, որ քերքում ենք, այլ գրում ենք երկու թարմ դէպքերի աղեցութեան տակ։

Ահա թէ ինչ հակառակ արդիւնք են տալիս անգէտ ծնողների բարի նպատակով արած առաջադրութիւնները։

Ցանկալի է, որ մեր գիւղացիք այսուհետև յատակ և պարզ դաղափար ունենան զինուորութեան վերաբերմամբ, որ նրանք նրա վրա նայեն ոչ թէ աքսորի, այլ քաղաքացիական պարտականութեան կատարման և որոշ չափով էլ կրթիչ ընտիր ունեցող ինստիտուտի վրա։ Նաև աւելի լաւ համարեն զբաղվել աշխատող ձեռքի երեք տարվայ աշխատանքից, քան տեսնեն, որպէս հետևանք իրանց խորշրդի, այդ աշխատող ձեռքի մահանալն ու ծաղիկ հասակում գերեզման իջնելը։

Պէտք է խնայել 21 տարեկան երիտասարդների կեանքը և ոչ թէ անմիտ խորհուրդներով ու յատին նկատումներով մղել նրանց իբրատեսակ ինքնասպանութեան գիրքը, որը ծանր է թէ զաւակի և թէ ծնողի համար։

Հայրենակից

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

Պետերբուրգ, 11 մայիսի

Նախագահում է իշխ. Վօլկօնսկին։

Բլինովը զեկուցանում է Անդրկովկասի նահանգական զեմստվային տուրքերի եռամեայ նախահաշիւը։

Զեսէիձէն ուշադրութիւն է հրաւիրում այն հանգամանքի վրա, որ չափազանց սուղ դրամներ են յատկացվում Կովկասի կուլտուրական կարիքների համար. այդպիսի կացութիւնը կը շարունակվի, եթէ Կովկասում զեմստվօ չը հաստատվի։ Հռետորը հաւատացած է, որ Կովկասի ազգաբնակութիւնը երբէք զեմստվօ չի ստանայ իշխանութիւնից, որովհետև վերջինիս շահաւէտ է ծախսել զեմստվային գումարները և շահաւէտ չէ ազգաբնակութեանը ինքնագործունէութեան կոչել։ Զեմստվային տուրքերի մեծ մասը տրվում է զեմստվային ոստիկանական պահնորդութեան համար, որ սենատոր Կուզմինսկի զեկուցագրի խօսքերով՝ զբաղվում է գրամաշորթութեամբ և ծանր բեռ է հանդիսանում ազգաբնակութեան համար։

Սաղաթելեանը մատնանշում է, որ կուլտուրական պէտքերի համար սակաւ գրամներ յատկացնելով իշխանութիւնը՝ մտադիր է խոշոր գումարներ ծախսել Կովկասի հողերի գնահատման վրա, որը ներկայումս կարող է վնասել իրերի տնտեսական վերադարձմանը։

Ցիմօշկինը կարծում է, որ Կովկասեան ոստիկանական պահակախմբերի մէջ, ինչպէս և ամեն տեղ, կան վատ տարրեր, բայց անբարեիղձութիւն է տարողջ ինստիտուտի վրա ստուերը ձգել։ Դեռ թողած այն, որ պահակախմբերի ¾ մասը բաղկացած է ուսանողներից։ Ընդգծելով որ քիչ գումարներ են տրվում կուլտուրական նպատակների համար, հռետորը առաջարկում է Կովկասում զեմստվօ մտցնել, պայմանով որ ռուսական շահերը գերադասված լինեն։

Հայդարովը ցանկանում է, որպէսզի Դաղստանի շրջանում ժողովվող զեմստվային տուրքերը ծախսվեն միմիայն Դաղստանի կուլտուրական հաստատութիւնների վրա։

Օրինագծի յօդուածային քննութեան ժամանակ Դուման, Սաղաթելեանի առաջարկութեան համաձայն, ցանկութիւն է յայտնում, որպէսզի երկաթուղի կառուցվի Կարսի երկաթուղագծի կալաչերան կայարանից մինչև Բէյզրդալի խաճուղին։

Նախահաշիւը ընդունվում է մասնաժողովի խմբագրած ցանկութիւններով։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— «Մշակի» ներկայ համարին իբրև յաւելուած կցված է յօբելեանական կիսաթերթի № 9-ը։

— Թիֆլիսի կանանց բարձրագոյն դասընթացքների պատմութիւն սովորող ուսանողուհիներին Կովկասի Փոխարքայի կողմից թոյլատրված է զիտական նպատակով օգտվել Կովկասի Փոխարքայի դիւանատան արխիվից։

— Երկուշաբթի օրվայ Կայսերական տօնի պատճառով քաղ. դումայի նիստը կը կայանայ երեքշաբթի, մայիսի 15-ին։

— Այսօր, ցեր. ժ. 11-ին, տեղի կունենայ Կրակից Ապահովագրող Փոխադարձ Ընկերութեան անդամների ընդհանուր ժողովը Փոխադարձ Վարկի Ընկերութեան բանկի շէնութեան մէջ։

— Հինգշաբթի, մայիսի 10-ին, տեղի ունեցաւ Կայսերական Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութեան նիստը, որին ներկայ էին Փոխարքայի օգնական սենատոր Է. Վատացի, երկրագործութեան մինիստրի լիազօր Գ. Արխիպով և Ընկերութեան անդամներ ու հիւրեր թւով 40 հոգի։ Ա. Բալանթար կարդաց զեկուցում ալպիական մնտեսութեան բարեւրման մասին և առաջարկեց հիմնել քիմիկո-բակտերիոլոգիական-կենդանաբուծական մի կայարան, որի վրա ծախք կերթայ միանուագ 8000 ռուբլի և տարեկան մօտ 12,000 ռուբլի։ Ընդհանուր ժողովը հաւանութիւն տուեց առաջարկին։ Ա. Մարգարեան պատմեց իր գիւղատնտեսական դիտողութիւնների մասին, որ նա արել է արտասահմանում ճանապարհորդած ժամանակ։ Վերջում Ա. Բալանթար ծանօթացրեց ժողովականներին Դարբասանի ցուցանդէսի հետ։ Զեկուցումները յարուցին մեծ հետաքրքրութիւն։ Սենատոր Վատացին յայտնեց մի շարք նպատակայարմար խորհրդածութիւններ մեր երկրի առաջադիմութեան խնդիրների մասին։ Ժողովը փակվեց ժամը 12-ին։

— Բագուի Հայ Կուլտ. Մրութ. Գեղարուեստի նախաձեռնութեամբ ամսոյս 25-ին Արքունական թատրոնում ներկայացվելու է յայտնի երաժիշտ Զուլաքեանի «Էքզէրցիզ» օպերան, որին մասնակցելու համար հրաւիրված են յայտնի երգիչներ ու երգչուհիներ։ Այս օպերան մի քանի անգամ դրվել է Բագուում և ունեցել է մեծ աջողութիւն։ Ներկայացման զուտ արդիւնքի կէսը յատկացվելու է Խաչատուր Աբովեանի արձանի կառուցմանը։

— Այսօր Երաժշտական Դպրոցի դահլիճում (Գրիբոյեդովսկայա փող.) կայանալու է «Պատանի» ալմանախի խմբագրութեան կազմակերպած «Գրական-երաժշտական երեկոյթը», ուր ուսուցիչ Արշակ Ցարուքիւնեանը խօսելու է «Պատանի» ալմանախի շուրջը։

— Մեզ հաղորդում են, որ հայկական սեկցիայի սիրողների խմբի բեժիսեոր Ա. Բաքսեանը հրաժարվել է բեժիսեորութիւնից։ Այսուհետև հայկական սեկցիայի ժողովրդական ներկայացումները տրվելու են առանց դերասան Արաքսեանի զեկավարութեան։ Կազմված է հետևեալ հետաքրքրական բեկերտուարը առաջիկայ հերթական ներկայացումների համար. նոր պիէսներ՝ «Բրլիանտէ», «Ցաղթվածներ», «Ինչ տեսել ես, էլ չես տեսնի», «Անջէլօ», «Մեր կեանքի օրերը», որոնք դրվում են առաջին անգամ։

— Երէկ, ամսոյս 12-ին, թեմական տեսուչ Ց. Տէր-Միրաքեանը այցելեց Թանդոյեան օրիորդաց դպրոցը և ներկայ եղաւ դասերին։

— Հայուհեաց «Մեղու» աշխատանքի տան օգտին մայիսի 9-ին կայանալիք զբօսանքը տեղի կունենայ երկուշաբթի, մայիսի 14-ին, բժ. Կարապետեանի այգում՝ նոյն ծրագրով։

— Ժողովրդական Համալսարանի վարչութիւնը մատչելի դասախօսութիւններ է կազմակերպում նաև Հալաբարում։ Առաջին դասախօսութիւնը այնտեղի կուրսում կօօպերացիայի մասին հայերէն լեզուով կանէ գիւղատնտես Աթանասեանը մայիսի 20-ին։

— Թիֆլիսի քաղ. դուման որոշեց կատարելագործված կերպով տալայատակել քաղաքիս յատնի փողոցները այն 100,000 ռ. գումարի հաշվին, որ յատկացված է այդ նպատակով։ Քաղաքիս ծայրամասերի սալայատակման գործի համար վերոյիշեալ գումարից պիտի յատկացվի 15,000 ռուբլի գումար։

— Մայիսի 11-ին նահանգական ատեանը վերաքննելով Բ. Միրիմանեանի գործը իր խանութում անցեալ տարվայ ապրիլին իշխ. Դ. Բեհրութեանին վիրաւորելու նպատակամբ՝ դատապարտեց նրան երկու շաբաթվայ բանտարկութեան կալանաւորական տանը։

— Նահանգական իշխանութիւնը քաղաքային վարչութիւնից պահանջեց այն կըտակը, որով Նիկոլայ Զուբալովը Թիֆլիս քաղաքին նուիրաբերից 263,385 ռ. դրամ և մի տուն։

— Ս. Դաւթի եկեղեցու տօնի օրը վրաց եպիսկոպոս Անտոնի պատարագ մատուցեց նոյն եկեղեցում, որից յետոյ այդ եկեղեցու գաւթում թաղված վրաց հրապարակախօս և բանաստեղծ Իլիա Ճավճավաձէի գերեզմանի վրա հոգեհանգստեան կարգ կատարեց։

— Վրաց լեզուով մանկավարժական ձեռնարկներ կազմող էգնատէ Խրամելաշվիլին ծանրապէս հիւանդացել է։

— Մօտ օրերս Պետերբուրգից Թիֆլիս պիտի ժամանէ պրոֆ. Սիվերսը։

— Մայիսի 11-ին, Ղուկաս Բէկնազարեանի թէյատանը, որ գտնվում է Բախկալսկայա փողոցում, յանկարծամահ եղաւ Ախալքալաքի գաւառի Գանձա գիւղի ընակիչ Յովսէփ Լիւլիկեանը, 50 տ.։

— Մայիսի 11-ին, Թիֆլիսեցի Մարիամ Յովհաննիսեան Գասպարեանը, որ ապրում է Հալաբարակայա փողոցում իր ծնողների մօտ, իրան կենազրկելու նպատակով կարբոլեան թթուու ընդունեց և ուղարկվեց Մ. Արամեանի անուան հիւանդանոցը։ Նրա կեանքը վերծ է վտանգից։

— Մայիսի 11-ին, Մօսկվսկայա փողոցում ապրող Թիֆլիսեցի Բոզդան Երիցեանի ընակարանից նրա տան սպասաւոր Պաւէլ Աթանասովը գողացել է 145 ռուբլի փող և 1965 ռ. մուրհակներ, զանազան անձանց տրված, և անհետացել է։

— Թիֆլիսի ծնողաբերական ապաստարանում տարվայ սկզբից մինչև այժմ եղել է ծնողաբերութեան 101 դէպք։

— Մայիսի 12-ին Սղնախից հեռագրով հաղորդում են, որ Սղնախի գաւառի Կաբալօ գիւղում, մայիսի 11-ին, անյայտ չարագործների ձեռքով սպանվել է իշխան Վաչնաձէների տոհմի կալուածքների կառավարիչ իշխան Իոսիբ Երիցեղովիչ Վաչնաձէ։ Սպանութեան տեղն է գնացել գաւառական իշխանութիւնը։

— Բագուից մեզ հաղորդում են, որ ծանրապէս վիրաւորված ուսուցիչ Մ. Ապրակսինի դրութիւնը վատացել է։ Երէկ նրան օպերացիայի պիտի ենթարկէին։

— Այսօր, ցեր. ժ. 11-ին տեղի կունենայ Թիֆլիսի վաճառականների արտակարգ երկրորդ ընդհանուր ժողովը Ա. Միրեանի հրաւէրով։

— Երևանից մեզ գրում են. «Հայ դերասանական խումբը Աբէլեանի զեկավարութեամբ մայրաքաղաքները, Ռօստով, Եկատերինոդար և այլ տեղեր արտիստական տուրնէ կատարելուց յետոյ՝ յունիսի սկզբից կանցնի Շամախի, Սալիան և Մադրասա, ապա Շուշի և Գօրիս մի շարք ներկայացումներ տալու»։

— Սղնախից գրվում է. Օհանեանը խնդրում է տպագրել հետևեալը. «Սպիտակ Ծաղկի օրը Սղնախի և նրա գաւառի շրջանում հանգանակվել է ընդամենը 516 ռ. 91 կ.։ Սղնախում հաւաքվել է՝ 367 ռ. 84 կ., Ցարսկիէ-Կոլօդցիում՝ 54 ռ. 93 կ., Վաբի-Մաչխանում՝ 40 ռ. 40 կ., Վելիցիխէում՝ 17 ռ. 73 կ., Գուրջաանում՝ 9 ռ. 65 կ., Անազայում՝ 6 ռ. 83 կ. և Կօղալօյում՝ 13 ռ. 18 կ.։ Անյայտից ստացվել է՝ 6 ռ. 35 կ.։ Ընդհանուր 516 ռ. 91 կ. գումարից դուրս գալով ծախսը (73 ռ. 95 կ.) և գին չունեցող դրամները (1 ռ. 68 կ.), մնացած 441 ռ. 21 կ. գումարը ուղարկված է Թոքախտի դէմ Մաքառող Կովկասեան Ընկ. վարչութեանը ի պահեստ»։

ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԹԵՐԹԵՐԻՑ

— Ուսուցչական կոչում ստանալու հարցաքննութիւնները.—Լ. Ա. Կասսօն տեղեկացրել է Մօսկվայի համալսարանին, որ գիմնազիայի ուսուցչի կոչում ձեռք բերելու համար տրվելիք հարցաքննութիւնները այսուհետև պէտք է կատարվեն նոր հիմունքների վրա։ Այն է՝ մինչև օրս քննութիւնները տեղի էին ունենում ֆակուլտէտի հայեցողութեամբ։ Այժմ մինիստրը հարկաւոր է համարում, որ այդ քննութիւնները տեղի ունենան դպրոցական շրջանի առանձին քննական յանձնաժողովում։

— Հազուագիւտ կտակ.—Մօսկվայում հրազէնների առևտրով զբաղվող Ե. Ե. Գինկէլը մօտ օրերս վախճանվեց, 4.000.000 ռուբլուց աւելի կտակելով իր ֆիրմայի ծառայողներին, որոնց ձեռքը, սակայն, տրվելու չեն իրանց հասնելիք գումարները։ Բոլոր ծառայողները ներկայանալու են, իբրև փայատէրեր՝ մինիստրութեան մէջ արդէն հաստատված կանոնադրութեան համաձայն, բայց իրաւունք չունենալով՝ իրանց հայեցողութեամբ կարգադրութիւն անելու կանոնադրութեան հաստատվելուց 5 տարի յետոյ նրանք իրաւունք չունեն ծախսելու իրանց փայերը։ Ծախսելու դէպքումն էլ պէտք է ծախսեն միայն ընկերութեան անդամներին։ Ֆիրմայի շէմէյցարը, որ ծառայել է երկար տարիներ, իբրև փայ ստանում է 14,000 ռուբլի։ Ամենամեծ ծառայողները՝ արտէլշչիկ, պրիկազչիկ, ապրանք կապկպող ու ապրանքները տեսակների բաժանող՝ ստանում են 10,000—15,000 ռ.։

— Դոնատութեան դէմ.—Տեխնիկական ընկերութեան մէջ Ա. Բ. Ֆինկլեանը Մօսկվայում հնարել է մի խառնուրդ՝ պատերը խոնաւութեան դէմ պաշտպանելու և արդէն խոնաւացածները չորացնելու համար։ Մի քանի օր առաջ արին դրա փորձերը՝ տեխնիկական ընկերութեան կողմից յատկապէս ընտրված մասնաժողովի ներկայութեամբ ու Ն. Կ. Լօխտինի նախագահութեամբ։

Գիւտը յայտնագործողին առաջարկվեց ցամաքեցնել իւղանկարչութեան, քանդակագործութեան ու ճարտարապետութեան դպրոցի աշխատանոցի մի պատը, որից շատ սակաւ ծլթում է խոնաւութիւնը հողի յատակի վրա։ Նկարչի պատերից մէկը, որ առնաւել խոնաւ էր, կէսով չափ ծածկվեց բաղադրութեան քարակ շերտով։ Իսկ մնաց կէսը, քննելու համար, չէր ծածկված։ 40 բոպէից յետոյ պատի երեսը բոլորովին չոր բացաւ, այնպէս որ էլ խոնաւութիւն չէր երևում, մինչև անգամ, երբ պատը, դդալի խորութեամբ, ծակեցին դանակով։ Բաղադրութեան զօրեղ ներգործութիւնը՝ Լօխտինի ու յանձնաժողովի անդամների ասելով անկասկած է։

— Ստրինդբերգի մահը.—Երիտասարդներից մայիսի 2-ին հեռագրում են. «Այսօր վախճանվեց Ավգուստ Ստրինդբերգը»։ Բարև մնաք ասելով, մեռնողը սեղմեց իր որդու, աղջկայ ու փեսայի ձեռքը և աւելացրեց. «Իմ անձնականիս նկատմամբ ամեն բան վերջացած է... Ես խօսում եմ վերջին անգամ»։ Յետոյ նա, վերցնելով սեղանի վրայից Աստուածաշունչը, սեղմեց կրծքին ու ասաց. «Միայն այս գրքում կայ ճշգրտութիւն»։

Սկանդինավական այս յայտնի գրողը կտակել է, որ իրան թաղեն առաւօտը, ժամը 8-ին, առանց պատարագի, ճառերի ու երգերի. խնդրել է նոյնպէս, որ իր մարմինը չը տանեն եկեղեցի, այլ՝ ուղղակի հանգստարան, ու թաղեն չքաւորների գերեզմանների մէջն, չը հանեն իր դէմքի դիմակը, այլ դագաղում դնեն իր կրծքին Աստուածաշունչն ու խաչը։

Ստրինդբերգի մասին Մաքսիմ Գօրկին ասում է. «Ոչ ոք ոչ մի ժամանակ չէ ունեցել ինձ վրա այնքան զօրեղ ազդեցութիւն, ինչքան Ստրինդբերգը»։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՕՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

— *Օպերէտա*

Վիէննայի օպերէտային խմբի 3-րդ ներկայացումը դրաւել էր ոչ այնքան մեծ բազմութիւն Արտիստական թատրօնում։

Այդ օրը, մայիսի 11-ին, դրվեց Շտրաուսի ներդաշնակած «Մարքարիտ վիէննացիներ» 3 գ. օպերէտան, որի բովանդակութիւնը շատ պարզ է։ բարձր հասարակութեան թեթեւամիտ ուրախ ներկայացուցիչները—կոմսեր, իշխաններ, սրանց կանայք—սիրաշահում են միմեանց, սիրահարվում են իրար վրա, մտնում են ամեն տեսակ կոմբինացիաների մէջ, դաւաճանում են միմեանց, մերկացնում են իրար և... վերջ ի վերջոյ տղամարդկանցից իւրաքանչիւրը իր «օրինաւոր ամուսնութեան» կնոջ հետ է...

Երաժշտութիւնը ունի մի քանի գեղեցիկ, նոյն իսկ մոդայիկ կտորներ։

Վերջին խօսքը մեզ առիթ է տալիս մատնանշելու, որ բանից դուրս է գալիս՝ «յայտնի» Վալէնտինօվը իր մի շարք օպերէտային «հեղինակութիւնները» ամբողջ կտորներով հիւսել է Շտրաուսի և Լէգարի, մասամբ նաև Օֆէնբախերի օպերէտներից։

Ներկայացումը անցաւ սահուն. այս անգամ անսամբլը աջող էր։ Առանձնապէս աչքի ընկան Մ. Վիրա, Աղէր, Էդուարդ Շտէյնբերգէր, Գէօրգի, Հանս Հանսէն։

Վաղը տեղի կունենայ խմբի պրեմիէրը՝ Մ. Վիրաի բենեֆիսը, որի առիթով կը ներկայացվի «Летучая мышь» մեծադիկ և ախորժալուր օպերէտան։ Ե.

«ՈՒՐԱԽ ԵՒ ՏԽՈՒՐ ԱՐԼԵԿԻՆՆԵՐԻ ԹԱՏՐՕՆԻ» ԺԱՄԱՆԱԿԱՒՈՐ

Մայիսի 22-ից սկսած Արտիստական Ընկերութեան թատրօնում կը սկսվեն՝ այսպէս կոչված «Ուրախ և տխուր արլեկինների թատրօնի» ներկայացումները՝ զեկավարութեամբ Մօսկվայի Կ. Նեղօբինի թատրօնի բեժիսեոր Ֆէօդոր Կոմմիսարժեվսկիի (հանգուցեալ Վերա Կոմմիսարժեվսկայայի եղբայր)։ Իբրև բեժիսեոր-դեկորատիւնատագէտ՝ Ֆ. Կոմմիսարժեվսկին երկու մայրաքաղաքներում էլ արժանացել է «մեծ դեղարուեստագէտ, որ թատրօնական գործը հանկացել է ամենայն մանրամասնութեամբ» կոչումին։

Նրա բեժիսեորութեամբ խաղացված պիէսները արժանացել են Պետերբուրգի և Մօսկվայի մամուլի բարձր գնահատանքը։ Ունենալով մէկ ամիս ազատ ժամանակ՝ Ֆ. Կոմմիսարժեվսկին շրջիկ խումբ է կազմակերպել, որի մէջ մտնում են Մօսկվայի Կայսերական Մեծ Թատրօնի բալէտի դերասաններ Զ. Ա. Մասլովան և Վ. Ա. Բեաբցեվը, Մօսկվայի Կայսերական Նեղօբինի թատրօնի դերասաններ Ա. Կոմմիսարժեվսկայան, Դ. Գրուզինսկին, Ա. Նեղիզօվը և այլք։ Այս խմբի հագուստները պատրաստված են նկարիչ Ն. Սապունովի ձեռով։ Խմբի բէպերտուարը բաղկացած է այսպէս կոչված արլեկիններին համապատասխանող պիէսներից, որոնց մասին մօտ օրերս կը յայտարարվի լրագիրներում։ Ներկայացումները սկսվելով մայիսի 12-ին՝ կատարվեն մայիսի 28-ին։

Այս ներկայացումները վերածնեցնում են թատրօնի այն շրջանը, երբ բեմական արուեստը բաժան-բաժան չէր եղած, երբ չը կար առանձին կատակերգութիւն, օպերա և բալէտ, այլ այս երեք տեսակներն էլ պարփակված էին մի ներկայացման մէջ և դրամատիկ դերասանը և երգում էր, և պարում։

Այսպիսի խմբեր մի ժամանակ կային Իտալիայում, որոնք խաղում էին այսպէս կոչված «Comedia del Arte» կատակերգութիւնները։ Նրանք շարժական կամ թափառական էին և՝ բալէտացած էին այնպիսի

դերասաններից, որոնք խաղացել էին բոլոր պիէսները՝ համաձայն իրանց ամպլուայի, բեմ էին եկնում ամեն մէկը իր համապատասխան հագուստի մէջ և պատշաճ գրիմով, այս պատճառով էլ կոչվում էին «մշտական դիմակներ»։ Թէև այս գործը կրկին վերատեղծվում է և կարելի է ասել, թէ իր բարեխորհութիւններով դեռ մի նորութիւն է, սակայն նա ապագայ է խոստանում։ Ահա այս է պատճառը, որ «Արլեկինների թատրոնի» նախաձեռնողը յոյս է դնում նրա աջողութեան վրա, որովհետև կարծում է, թէ կը գայ մի օր, երբ թատրոնական ասրուեստի բոլորը տեսակները ի մի կը ձուլվեն և բոլորը հաւաքականօրէն կը ներդրծեն ականատեսի վրա աւելի ուժեղ կերպով, քան բաժան-բաժան դրութեան ժամանակ։ Նախաձեռնողը հաւատում է, որ կը գայ մի ժամանակ, երբ դերասանը կը պարփակէ իր մէջ ամեն ինչ։

Ժամանակակից թատրոնը իր բարդ սարքերով, մեքենաներով և դեկորացիաներով չափազանց ծանր և անդիւրաշարժ է դարձել, որով և չէ կարող յարմարութիւն ունենալ մի շարք պիէսներ խաղալու համար։

Ֆ. Կոմմիսարժեվսկին «Արլեկինների (ճապարար) թատրոնի» ներկայացումներով առաջին քայլն է անում դէպի բազմապարփակ դերասանական բեմի գաղափարը և դէպի այն թատրոնը, որը կախումն չունի տեղից, և նրա ներկայացումները կարելի է կատարել և՛ հրապարակներում, և՛ բեմերի, և ամբիոնների վրա։

Բէպերտուարի մի մասը մասամբ բաղկացած է այն հին պիէսներից, որոնք սակայն իրանց ոգով ժամանակակից պիէսներին են մօտենում. բէպերտուարի մէջ մտնում են այլ և մեր օրերի այն պիէսները, որոնք աջողութիւն են գտել Պարիզում, Վիեննայում, Պետերբուրգում և Մոսկվայում։

Ներկայացումներից իւրաքանչիւրը կը բաղկանայ երեք պիէսներից, այն է՝ 1) Օպերետ, 2) Դրամա կամ Կոմէդիա և 3) Պանտոմիմ, որոնց և յատկացված է գլխաւոր մասը։ Ինչպէս թեցինք, խումբը բաղկացած է Մոսկվայի գլխաւոր թատրոնների դերասաններից։

Ներկայացումների ժամանակ վարագոյրը երբէք չէ իջեցվում, իսկ գործողութիւններն երբեմն առ երբեմն կատարվում են հասարակութեան մէջ, այն է՝ թատրոնի դահլիճում։ Երաժշտական մասը բաղկացած է Մոցարտի, Ադամի, 18-րդ դարի ֆրանսիական, այլև ժամանակակից երաժշտութիւնից։ Նախ քան ներկայացումն սկսելը, ըէժիսեոր Ֆէօդոր Կոմմիսարժեվսկին հասարակութեանը կը ծանօթացնէ իր ճառախօսութեամբ այս թատրոնի էութեան, պատմութեան և գաղափարի հետ։ Եթէ ի նկատի ունենանք, թէ ինչպէս համայն մարդկութիւնը որոնում է կեանքի նորանոր ուղիներ, ապա պարզ կը լինի, որ թատրոնի վերոգրեալ գաղափարը իրանից ներկայացնում է այդ նորանոր որոնումների մի այլ ձևը, մի նոր տեսակը կեանքի այդ մասի, գեղարուեստական պրպտումներին, որ աշխատում է շաբլոնի հասած բեմական արուեստի մէջ թարմութիւն, նոր հոսանք ներարկել. հետևաբար պիտի յուսայ, թէ Թիֆլիսի գեղարուեստասէր հասարակութիւնը իր ներկայութեամբ կը խրախուսէ այն ներկայացումները, որպէսզի թատրոնի այս ձևը զարգանայ։ Աչքի առաջ ունենալով, որ այս թատրոնը զուրկ է բարդութիւններից, որոնք մեծամեծ ծախքեր են պահանջում, կարելի է կարծել, թէ գեղարուեստի ռամկավարացման գործի տեսակէտից նրան մեծ ապագայ է սպասում, որովհետև այդպիսի ներկայացումներ հնարաւոր է կազմակերպել ամեն տեղ և ամեն պարագաների ներքոյ, նոյնիսկ բացօդեայ, որպիսի հանգամանքը հասարակ ժողովրդին ևս դիւրութիւն կընծայէ տեսնելու այսօրինակ խմբերի ներկայացումները։

Ա.

ՄԱՄՈՒԼ

Թամարա թագուհու յիշատակի առիթով ծագած հարցը սուր կերպարանք է ստանում։ Մենք կարծում ենք, սակայն, որ «Тифл. Листокъ» թերթի խմբագրութեան կողմից երէկվայ համարում տպված յօդուածով պէտք է հարցը փակված համարել։

Ահա այդ յօդուածը.

Տեղական մի քանի լրագիրներում երևաց՝ մի նամակ ստորագրված Անտոնի, Դաւիթ եպիսկոպոսների և վրաց եկեղեցու միւս հովիւների կողմից, որի մէջ նրանք յայտնում են, թէ Թամարա թագուհին «700 տարվայ ընթացքում պաշտվել է բազմաչարչար ժողովրդի կողմից», իսկ յետոյ զայրոյթ է արտայայտվում վրաց ազգի ազգային-կրօնական սրբութիւնը «յանդուգն» վերաւորողներին։

Խմբագրութիւնը պարտք է համարում յայտնել, թէ ոչ իր, ոչ իր աշխատակցի մտքովն անգամ չէ անցել վիրաւորել հաւատացեալների զգացումները և վրաց ժողովրդի ազգային-կրօնական զգացումները։

Ինչպէս և առաջ ևս յայտնված էր, նոյնպէս և այժմ յայտնվում է, որ «Тифл. Листокъ»-ում տպված ոչ մի տողի մէջ ակնարկ անգամ չը կար։

Ընդհակառակը, խմբագրութիւնը հարկաւոր յարգանքով և լիակատար ճանաչողութեամբ վերաբերվել է և վերաբերվում է Թամարա մեծ թագուհու պատմական արժանիքներին, թագուհու, որի թագաւորութիւնը փայլուն դարաշրջան էր վրաց ազգի կեանքի մէջ։

* *

Կուսակցական մամուլի մէջ իւրայիններին պաշտպանելու տգեղ ախտը այնքան խոր արմատներ է ձգել հայ մամուլի մի քանի նեղ կուսակցական օրգանների մէջ, որ յաճախ՝ նրանց այդ ձգտումը պարզապէս անհեթեթութիւն է դառնում։

Այդպիսի մի ծաղրելի անհեթեթութիւն թոյլ է տուել իրան Ամերիկայում հրատարակվող «Ասպարէզ» անունով սակաւ յայտնի թերթը։

Պէտք է ասել, որ մի քանի ամիս առաջ Կ. Պոլսի «Ազատամարտ» կուսակցական թերթի մէջ տպվեց բանաստեղծ Աւետիք Իսահակեանի ստորագրութեամբ «Բուդդհա» վերնագրով մի բանաստեղծութիւն, որ շատերը սկսեցին գովել իբրև մի գեղեցիկ քերթուած։

Արդ՝ Ամերիկայում հրատարակվող «Armenia» անգլերէն գրական հանդէսի խմբագիր Արշակ Մահտեսեանը ուղղել է «Ասպարէզ» թերթին մի նամակ, որի մէջ հետևեալն է գրում.

Երեք ամիս առաջ «Ազատամարտ» շաբաթաթերթին մէջ երևցաւ Աւետիս Իսահակեան ստորագրութեամբ շատ գեղեցիկ կտոր մը «Բուդդհա» վերտառութեամբ։ Ես Աւետիս Իսահակեանի ոճին հիացող մը ըլլալով՝ պատեհութիւն կորսնցուցած չեմ անոր գրութիւնները կարդալու, թէև շատ անգամ անոնց մէջ ալեւոյր օտար հեղինակներու արձագանքը կը լսէի։ Բայց կը խորհէի թէ լաւ գրողներ, յաճախ, այսինչ կամ այնինչ պարագային տակ, կընային զիրար յիշեցնել։

«Բուդդհան» կարդալէս վերջը, սակայն, տեսայ թէ այլ ևս կարելի չէր Աւետիս Իսահակեանը արդարացնել։

«Բուդդհան», զոր Աւետիս Իսահակեան ստորագրեր է, բանաստեղծութիւն մըն է Սէլմա Լագերլօֆի «Հաթթօ, Ճգնաւորէն»։ Սէլմա Լագերլօֆ, Նորվեգիացի նշանաւոր գրագիտուհին, որ Նոբելի գրականութեան մրցանակը շահեցաւ 1910-ին, իր այդ համբաւաւոր պատմութիւնը հրատարակած էր գրեթէ տասը տարի առաջ։ 1904-ին «Հաթթօ, Ճգնաւորը» թարգմանուեցաւ եւրոպական բոլոր լեզուներուն, ու Աւետիս Իսահակեան կարդացած ըլլալու է զայն կամ ֆրանսերէն թարգմանութեամբ կամ ռուսերէն։

«Հաթթօ, Ճգնաւորի» անգլիերէն թարգմանութիւնը հրատարակուեցաւ Armeria-ի փետր. 1912-ի թիւին մէջ, և զայն կարդացողները, որոնք կարդացեր են նաև Աւետիս Իսահակեանի «Բուդդհան», չեն կրնար վայրկեան մը իսկ տարակուսիլ Աւետիս Իսահակեանի բանաստեղծութեան վրայ։

Ցաւալի է, խիստ ցաւալի, որ բաւական սիրուած գրագէտներ անձնատուր կըլլան այսպիսի փորձութեան՝ գէշ օրինակ դառնալով սկսեալներու։

Սակայն ցաւալին միայն այն չէ, որ Աւ. Իսահակեանը գրագողութեամբ է զբաղվում, այլ «Ասպարէզի» ցինիկ պատասխանը։ Կամենալով à tout prix արդարացնել Աւ. Իսահակեանին, այդ թերթը պատասխանում է, որ եթէ լաւ քննելու լինենք, գուցէ գտնենք, որ Սէլմա Լագերլօֆ Նորվէգիացի գրողը ինքն ևս ուրիշից է գողացել, ուստի անարդարացի է բանաստեղծ կոչել Ա. Իսահակեանին և ոչ նորվէգիացուն։

* *

Գիտեն ընթերցողները, որ «Հօրիզոն» թերթը մի քանի անգամ զանազան ձևերով ու անուններով մեղադրեց «Մշակին», որ 40-ամեայ յօբիլեան կատարելու համար մենք փոխել ենք լրագրի վերնագիրը և մի տարի առաջ քշել թեականը։ Մենք, իբրև պատասխան այդ բոլոր խծբծանքների, առաջ բերինք «Հօրիզոնի» այժմեան դեկավար Լէօի մի յօդուածը, տպված «Մշակի» 1902 թ. յունվ. 1-ի (№ 1) համարում, որով նա այդ օրը «ողջունում էր «Մշակի» երեսնամեակը», և հարց տուինք. եթէ 1902 թ. յունվարի 1-ին լրացել էր «Մշակի» երեսնամեակը և պ. Լէօն ողջունում էր այդ երեսնամեակը, մթթէ արևի պէս պարզ չէ, որ 1912 թ. յունվարի 1-ին լրացել է քառասնամեակը, հետևաբար ինչ իրաւունքով դուք ասում էք, թէ մենք իրաւունք չունենք տօնելու 40-ամեակը։

Մեր այս պարզ հարցմունքին՝ պ. Լէօն հարկ է համարել պատասխանել ոչ թէ ըստ էութեան, այլ միայն հայհոյանքներով, մարգարէներով, որ մեզ մնում է միայն շարել այստեղ, ցոյց տալու համար թէ «Հօրիզոնի» խմբագրութեան մէջ ինչ բարքեր են տիրում։

Ահա այդ մարգարէները. «Մշակի» կլիշէի այժմեան տէրերը գետին մտնելու տարբերական ազնուութիւնից էլ զուրկ են», «գետինը մտնելու փոխարէն», «արդարանում են կմկմալով, բառերը ծամծմելով», «անարդ խարդախում», «եթէ արտատպելու անխելքութիւնն ունենաք, միշտ կարմրելու, գետին մտնելու դրութիւնը ձեզ կը լինի վերապահված» և այլն և այլն։

Լէօի՝ իր տպած և իր ձեռքով գրված տողերի յիշեցնումը այնքան կատաղութիւն է պատճառել նրան, որ մարդը մոռացել, կորցրել է մարդկային ամեն չափ և մաքրասիրութիւն։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Գօրիս, 2 մայիսի

Կ. Հ. Բ. Ընկերութեան Գօրիսի ճիւղի վարչութիւնը պատիւ ունի յայտնելու ի գիտութիւն օտարազգի զանգեղուցչներին, բարերարներին, հայ հեղինակների և թարգմանիչների, որ իր խնամքի տակ գտնվող ձրի մուտքով գրադարան-ընթերցարանի օգտին խնդրում է նուէրներ՝ գրքով, գրքերով և այլն, որի համար հրապարակով իր խորին շնորհակալութիւնը կը յայտնէ։ Հասցէն՝ Герюсы (Елис. г.), Библіотека-Читальнія Герюсин. отд. Арм. Благ. Общ. на Кавказѣ.

Նախագահ՝ Մ. Տէր-Գրիգորեան
Քարտուղար՝ Սազանդարեան

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

—

✦ «Рус. Сл.»-ին Թէհրանից հեռագրում են. «Քիրմանշահի ուղղութեամբ Համադանից դուրս եկած կառավարական զօրաբանակը Եփրեմի հրամանատարութեամբ շաբաթ օրը, Համադանից 50 վերստ հեռաւորութեան վրա, սկսեց յարձակում գործել Սալար-ուդ-Դովլէի զօրամասերի վրա, որոնք գտնվում էին իրանց դիրքերում։ Առ. ժամը 9-ին կռիւը տաքացաւ և Սալարի քիւրդերը կրեցին մեծ կորուստներ։ Եփրեմը, որ անձամբ ղեկավարում էր ճակատամարտը, վիրաւորվեց բերանից։ Վէրքը երևաց մահացու, և Եփրեմը մեռաւ կռիւի դաշտում։ Երեկոյեան ժամը 7-ի մօտերը կռիւը վերջացաւ քիւրդերի պարտութեամբ։ Նրանք յետ նահանջեցին։ Սալար-ուդ-Դովլէի կորուստներն են 150 սպանված և վիրաւորված, 200 գերի։ Եփրեմի զօրաբանակից ընկան 40 հոգի. վերաւորների թիւը մեծ է»։

✦ Եփրեմի մահը պարսիկ դեկավարների վրա գործեց չափազանց ուժեղ տպաւորութիւն։ Ցանձին Եփրեմի Պարսկաստանը կորցնում է միակ մարդուն, որ կարող էր դեկավարել պատերազմական գործողութիւնները աւազակների, խաներին կողոպտելու պատրաստ հրոսակախմբերի դէմ։

(«Р. Сл.»)

✦ Եփրեմը մեռաւ 42 տարեկան հասակում։ Վերջերս նա տկար էր և պատրաստվում էր բժշկվելու գնալ Եւրոպա դեռ անցեալ ամառ, սակայն Շուստերի թախանձանքին լսելով իր վրա վերցրեց Մահմէդ-Ալիի և Սալար-ուդ-Դովլէի դէմ յայտարարված կռիւի դեկավարութիւնը։ Երբ յեղափոխականները Թէհրանը վերցրին, Եփրեմը ըստանձնեց պարսկական ամբողջ ոստիկանութեան պետի պաշտօնը, իսկ դժուարին բօյէներին հրամանատարում էր Պարսկաստանի բոլոր զինված ոյժերին։ Աշնան յաղթութիւններից յետոյ Եփրեմը կառավարութիւնից ստացաւ թանգագին քարերով ծածկված թուր, և մէջլիսը նշանակեց նրան տարեկան 7,000 ռուբլի ցմահ կենսաթոշակ։ Այս տարվայ յունվարին Եփրեմը ստացաւ «սարդարի» տիտղոս, որից նա երկար հրաժարվում էր։ («Р. С.»)

✦ Եփրեմի մահից յետոյ կառավարական զօրքերը Եփրեմի աջ ձեռք յայտնի Քեռիի հրամանատարութեամբ շարունակեցին հալածել քիւրդերի հրոսակախմբերին։

✦ Ինչպէս հեռագրում է «Р. Сл.»-ի Թղթակիցը Թէհրանից, Ռուսաստանը և Անգլիան թոյլ չեն տայ Սալար-ուդ-Դովլէին մտնել Թէհրան նոյնիսկ այն դէպքում, եթէ նա յաղթող հանդիսանայ։

✦ Ռուսաց արտաքին գործերի մինիստրութիւնը կտրականապէս հերքում է Պարիզի ռուսաց դեսպան Իզվոլսկիի հրաժարվելու մասին տարածված լուրերը։

✦ Գերմանական լրագիրները գրում են, որ Ռուսաստանը կամովին միջադէպ ստեղծեց իր և իր դաշնակից Ֆրանսիայի միջև նրանից յետոյ, երբ վերջինս հրաժարվեց միանալ Ռուսաստանի հետ ակտիվ կերպով ազդելու Թիւրքիայի վրա։

✦ Երիտասարդ Թիւրքերի կոմիտէտի շարքերում երկպառակութիւններ են։ Պարլամենտի նախագահ Խալիլ-բէյի ընտրվելուց յետոյ, «Մ. և Ա.» կոմիտէտի հիմնադիրներից մինը և աչքի ընկնող գործիչ Նիազիմ-բէյը հրաժարվեց Սալոնիկի վալիի պաշտօնից, պատճառաբանելով որ Խալիլ-բէյի նման կամազուրկ մարդուն պատասխանատու պաշտօն տալը խայտառակութիւն է կոմիտէտի համար։

✦ Ալբանական ապստամբ վայրերից ստացվող տեղեկութիւնները մէկը միւսից սարսափելի են։ Ապստամբութիւնը ժամ առ ժամ տարածվում է, որովհետև ապստամբները չեն ընդունում Թիւրքաց կառավարութեան խոստումները։ Դրութիւնը վտանգաւոր է։

✦ Նորվէգիայի զանազան քաղաքներում տեղի են ունենում ժողովրդական միտինգներ, որոնց մէջ հռետորները քարոզում են պատրաստվել պատերազմի Հիւսիսային ծովում։

✦ Պետերբուրգում մատեմատիկայի պրոֆէսոր ակադեմիկոս Մարկովը իրան յայտարարեց ուղղափառ եկեղեցուց անջատված։ Մինօրդի յորդանքները ազդեցութիւն չունեցան։

✦ Սենատոր Կեմպէլի քննութիւնը քննիչ Լրժինին դատի յանձնելու գործի առիթով յանձնվեց արդարադատութեան մինիստրին։ Վերջինս գտաւ միայն անփութութիւն Լրժինի քննիչ աշխատանքում և ոչ խարդախութիւններ։

✦ Զինական պատգամաւորների պալատի դռնփակ նիստում անվստահութիւն յայտնվեց կառավարութեանը և պահանջվեց շտապով հաշիւ ներկայացնել ծախքերի մասին։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ե. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
«606»-ի ՆԵՐՄՈՒԿՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝ 11—12 ժ.
Բ. Ս. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վեներական (սիֆիլիս) հ.։
Բ. Դ. ԱՂԱՅԱՐԵԱՆ—1—2 ժ. ներքին և երեխայոց հիւ.։
Գ. Մ. ՀԻԳՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՅԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան կանանց և երեխայոց հ.
Ն. Տ. ՄՈՒՐԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ Դ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական վիրաբուժութեան և միզասեռ. հ.։
Դ. Ե. ԳՈՒՐԳԻՆՕՎ—12—1 ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահան.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ԱՄԲՈՒՄՕՎԱ-ՄԵԼԻՔԵԱՆ — 1—2 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։
ԵՐԵԿՈՆՆԵՐ՝
Մ. Դ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.։
Վճարը 50 կ.։ Հրաւէրները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Ռ. Նաւասարդեան
1· 0—43

ԴՈՔ. Ա. ՇԱՀԲԱԶԵԱՆԸ
ԲԵՐԼԻՆՈՒՄ
Ասիստենտ պրոֆ. Թոլդտայդերի և պրոֆ. Կլապի Բերլինի համալսարանի արքայական կլինիկաներում։ Ընդունում է ամեն կարգի հիւանդների, և պրոֆեսորների խորհրդակցութեամբ յանձնարարում է նրանց համապատասխան մասնագէտներին։
Հասցէ՝ Берлинъ. Карль-штрассе, № 31. Пансіонъ Геймана (около вокзала, Фридрихъ-штрассе).
(о. м.) 331. 5—2

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ
Մասնագէտ սիֆիլիս (ՑՕՑ), միզասեռական վեներական և կաթուի հիւանդութիւնների։ Էլեկտրաբուժութիւն։
Ընդունե- (12½—2 ժ. ցերեկվայ։
լութիւնը (5—7 ժ. երեկոյեան։
ամեն օր (Կանանց համար՝ 2—3 ժ. ցեր.
Սօլոլակ, Բէլոուսովսկայա, № 33 (անկիւն Պասկէվիչի փողոցի)։ Տէլէֆօն № 1175.
(Ե. հ.կ.) 888. 100—100

ԲԺԻՇԿԱԿԱՆ ՖԷԼԴՇԷՐ
Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆ
Семеновская ул., № 9. Ժամը 3—4-ը։

Ա. ԵՍԱՅԵԱՆԻ
ԳԱՂՏՆԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ԲԺՇԿԱՐԱՆ
բաղմաթիւ խորհուրդներով, ըէցէպտներով և նկարներով. գինը 50 կօպ. Ճանապարհածախսը 15 կ. մարկաներով։ Բժշկարանը պահանջողներին ՁՐԻ, իբրև պրեմիա, միժամանակ կուղարկվի նոր լոյս տեսած ծիծաղաշարժ վօդէվիլ՝ «ԳՆԻԿԱՐՄԱՏԻ ՁՈՒՎԱՐԸ» (առանձին՝ գինն է 20 կօպ.)։
Դիմել՝ Тифлисъ, Семеновская ул. № 9. Артемію Есаянцу.
(Ե.հ.կ.) 287. 50—7

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀՕՆՕՐԲԷԻ (ՏՐԻՊՊԷՐ) ԴԷՄ
ՆՈՐ-ՄՈԴԱՅԻ
„SALO—ՊԻՉԻԼԻՆ“
ներգործում է արագ և արմատականապէս, և բժիշկների վկայութեամբ համարվում է իբրև հաստատուն միջոց։ Գործադրելու ձեռնարկը կցված է արկղիկին։ Իսկականը մետաղեայ արկղիկներում, հատը՝ 1 ր. և 1 ր. 80 կ.։
Միաժամանակ լաւ է ներգործում բէ սուր եւ բէ յարատեւ բնոյթ ունեցող դէպքերում եւ կարճ ժամանակի բնթացքում վերացնում է ամենայատուկ բնթացք։
ՊԱՏՆՕՏՔ՝ Петербургъ, Разъѣзжая ул., № 7, аптека Б. Конгейма.
Ուղարկվում է վերադիր վճարով։ Ճանապարհածախքը պօստային սակագնով։
Գտնվում է Կովկասեան Ընկերութեան Դեղային Ապրանքների վաճառանոցում։
(Կ.) (П. 23620) 52—18

Золотая медаль Лондонъ 1893 г.

Главный складъ у Г. Ф. Юргенсъ, Москва.
(М. 5874) 24—8

ՄԻ ՈՒՍԱՆՈՂՈՒՀԻ
արտասահմանեան համալսարանի բժշկական ֆակուլտետից, ցանկանում է ուղևորել արտասահման հիւանդի, կամ ճանապարհորդուհու։ Տիրապետում է գերմաներէն լեզուին։
Պայմանների համար դիմել՝ Բէհրութեան փող. 44, բն. 3.
(Չ.Կ.) 325. 4—2

ՀՕՆՕՐԲԷԻ ԴԷՄ
(ՏՐԻՊՊԷՐ)
Փորձված միջոց
ՍԱՆՏՕ-ԿՈՒԲԻԲԻՕԼ
Ներգործում է արագ և միանգամայն բուժում է սուր և քրոնիկական արիպպէրը։ Իսկականը մետաղեայ արկղիկներում՝ մեր դեղատան արձակ ինքով, 32 կապս. պարուն. տրվող.—1 ր. 25 կ., 50 կապս.—1 ր. 75 կ.։ Դէպօն՝ С.-Петербургъ. Подольская аптека. Подольская 1—81.
Ուղարկ. ենք վերադիր վճ.։ Ճանապարհածախքը ըստ պօստ. սակագնի։ Գտնվում է նաև ամենալաւ դեղատն. և դեղավաճառանոցներում։
(Կ.) (П. 34615) 20—14

«ՄՇԱԿԻ» ԽՄԲԱԳՐԱՏՆԸ
ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
Համաշի Մասշահարեիրը
Գ. ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑԻ
Գինն է 30 կօպ.
(Ճանապարհածախքով՝ 38 կօպ.)
Այս գրքի վաճառումից գոյանալիք գումարը յատկացվելու է «ՄՇԱԿԻ» ապահովութեան Քօնդին։
Հասցէն՝ Тифлисъ, Ред. газ. „Мшакъ“, կամ Tiflis, Rédaction du journal arménien „Mschak“

Ծախված են ՄԻԼԻՈՆԱՒՈՐ քան կաներ։
ԹԱՐՄՈՒԹԻՒՆ եւ ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆ
է տալիս ամեն մի
ԿԱՆԱՑԻ ԴԷՄՔԻՆ
ԿԱԶԻՄԻ ԿՐԷՄԸ
ՄԷՏԱՄՕՐՖՕԶԱ
ԱՐՄԱՏՊԷՍ հեռացնում է բծիկները, բշտիկները, խազերը, պզուկները, այրուածքը և դէմքի այլ դեֆեկտները։


(Вил. 32791) 1—1

Թիֆլիսի Առաջին Առեւտր. Դպրոցի Վերատեսուչը
յայտարարում է, որ ընդունելութեան քննութիւնները պատրաստական առաջին և երկրորդ դասարանների համար տեղի կունենան մայիսի 24-ին և 26-ին։ Պատրաստական դասարանի ստորին բաժանմունքի համար առանց քննութիւնների ընդունվում են 7—9 տարեկան երեխաներ։ Խնդիրները ընդունվում են ամեն օր, բացի կիրակի և տօն օրերից, դպրոցի դիւանատանը։
Քննութիւնների սկիզբը առաւօտեան ժամը 8½-ին։
(Կ.) 310. 2—2

ՁՈՒԳՈՒՆ ՁՈՒԼՈՂ եւ ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ
Գ. Զ. ԵԱՐԱԼՕՎ ԵՒ Կ° ԱԿՑ. ԸՆԿ.
Թիֆլիսում, Կվիրիլսկայա փող. № 7, Անդրկով. երկ. վաչ. մօտիկ։
Ընդունում է պատուէրներ՝ կառուցումների, փականագործական (слесарныя), կաթսայեն, դարպնային, խառատային և զանազան մեխանիկական աշխատանքների համար։ Ընդունում է նոյնպէս պատուէրներ չուգունէ և պղնձէ ձուլուածքների՝ համաձայն տրված մակարդակների և կաղապարների։
Պատուէրներն ընդունվում են միանգամայն մատչելի գներով։
Գործարանը պատրաստում է նաև պարաիզի կահ-կարասեղէն։
Նոյն տեղը վաճառվում են երկու զանգ՝ մէկը 38 պ. 35 ֆ., միւսը 24 պ. 34 ֆ.։
(Հ. Կ.) 261. 10—10

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный.